



Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն



International Organization for Migration (IOM)

Միգրացիայի միջազգային
կազմակերպություն



ՀԱՅԱՍՏԱՆ ԿԵՐԱԴԱՐՁԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄՄԿ-ն փորձել է ապահովել սույն հետազոտության բովանդակության ճշգրտությունն ու ամբողջականությունը. այնուամենայնիվ, դրանում ներկայացված տեսակետները, տեղեկությունները, մեկնաբանությունները և եզրակացությունները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտացոլեն ՄՄԿ և դրա անդամ պետությունների պաշտոնական դիրքորոշումը: ՄՄԿ-ն պատասխանատվություն չի կրում որևէ կորստի կամ վնասի համար, որը կարող է առաջանալ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկությունները հիմք ընդունելու կամ դրանք օգտագործելու հետևանքով:

Հրատարակիչ՝ **Միգրացիայի միջազգային կազմակերպություն**

ՄՄԿ Հայաստանի առաքելություն

Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0010, ՄԱԿ-ի գրասենյակ,
Պետրոս Ադամյան 14, 1-ին հարկ
Հեռախոս՝ (+374 10) 58 56 92
Ֆաքս՝ (+374 10) 54 33 65
www.iom.int

© Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակման ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական որոնողական համակարգում, կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, լուսապատճենահանման, գրառման կամ այլ կերպ՝ առանց հրատարակչի նախնական գրավոր համաձայնության:



Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն



International Organization for Migration (IOM)

Միգրացիայի միջազգային
կազմակերպություն

Հայաստան վերադարձած անձանց վերախնտեզրման ուղղորդման ուղեցույց

Երկրորդ հրատարակություն

Երևան 2016 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ	7
Նախաբան	9
Բաժին I Վերաինտեգրման համակարգը Հայաստանում	11
Գլուխ 1. Վերադարձ	12
1.1 Քաղաքացիություն	12
1.2 Փաստաթղթերը	13
1.3 Վերադարձ և հաշվառում.....	14
1.4 Մուտք Հայաստան, մաքսային ծառայություն	15
1.5 Արտարժույթի ներմուծումը ՀՀ մաքսային սահմանով	16
Գլուխ 2. Վերաինտեգրում.....	17
2.1 Սոցիալ-տնտեսական վերաինտեգրումը և պետական մարմինների դերը	17
2.2 Միգրանտների ուղղորդման կենտրոնները.....	18
2.3 Վերաինտեգրման ծրագրերը	20
2.3.1 «Հայկական կարիտաս» կազմակերպությունը	21
2.3.2 Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը (ՆԻՖԳ).....	21
2.3.3 «Ֆրանս-հայկական զարգացման» հիմնադրամը (ՖՀԶՀ)	22
2.3.4 Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ).....	22
2.4 Խոցելի միգրանտներին տրամադրվող վերաինտեգրման աջակցությունը	24
2.4.1 Հայաստանում՝ վերադարձած անձանց և բնակչության խոցելի խմբերի հետ աշխատող կազմակերպությունները	26
Գլուխ 3. Վերաինտեգրումն ըստ ճյուղերի	27
3.1 Չբաղվածությունը	27
3.1.1 Պետական մարմինները	27
3.1.2 Չբաղվածության մասնավոր գործակալությունները.....	28
3.1.3. Ինքնազբաղվածությունը	29
3. 2 Առողջապահությունը	29
3.2.1. Ընդհանուր և իրավական դրույթներ.....	29
3.2.2 Համավճարի համակարգը	31
3.2.3 Հիվանդանոցային բժշկական օգնությունը	32

3.2.4 Դեղորայքի տրամադրումը.....	33
3.3 Կրթությունը.....	35
3.3.1 Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը.....	35
3.3.2 Որակավորումների ճանաչումը և գնահատումը	36
3.3.3 Լեզվի դասընթացները.....	37
3.4 Զինվորական ծառայությունը	38
3.5 Բանկային ծառայությունները	39
3.5.1 Կենտրոնական բանկ	39
3.5.2 Առևտրային բանկերը.....	39
3.5.3 Գրամական փոխանցումները և միզրանտների խնայողությունները	40
3.6 Սոցիալական պաշտպանությունը.....	41
3.6.1 Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ	41
3.6.2 Կենսաթոշակները.....	42
3.7 Իրավաբանական օգնությունը և անձնական տվյալների պաշտպանությունը	44
3.7.1 Իրավաբանական օգնությունը.....	44
3.7.2 Անձնական տվյալների պաշտպանությունը	46
Բաժին II Ուղղորդման համակարգը և վերախնտեզրման ինստիտուցիոնալ շրջանակը	47
Գլուխ 4. Միզրանտների ուղղորդման կենտրոնները	48
Գլուխ 5. Վերախնտեզրման ծրագրերի ցանկը՝ ըստ իրականացնող կազմակերպությունների.....	52
Բաժին III Առաջարկվող թեմատիկ աղբյուրներ և գրականության ցանկ	71
i. Ընդհանուր միզրացիոն դիտարկում - Հայաստան.....	72
ii. Վերադարձ.....	73
iii. Վերախնտեզրում	76
iv. Զբաղվածություն.....	78
v. Առողջապահություն.....	79
vi. Կրթություն	80
vii. Սոցիալական պաշտպանությունը	80
viii. Բանկային գործունեություն և ֆինանսներ.....	82
ix. Խոցելի խմբեր	83
x. Տվյալներ	84

Բաժին IV Վերադարձող անձանց վերախնտեզրման գործընթացում ներգրավված հիմնական կազմակերպությունների կոնտակտային տվյալները	86
Պետական մարմիններ	87
Միզրացիոն ռեսուրս կենտրոններ	91
Միջկառավարական կազմակերպություններ.....	92
Հայաստանյան ոչ-կառավարական կազմակերպություններ.....	93
Վերախնտեզրման ծրագրեր իրականացնող օտարերկրյա կազմակերպություններ.....	95
Բաժին V Հավելվածներ	96
Հավելված 1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի	97
Հավելված 2. Հայաստանում զբաղվածության մասնավոր գործակալությունների «Վարքագծի կանոնակարգ».....	99
Հավելված 3. Օրենքների և իրավական փաստաթղթերի ցանկ	101
Ազգային օրենսդրություն.....	101
Միջազգային և երկկողմ պայմանագրեր	108
Հավելված 4. Տվյալների պաշտպանության ՄՄԿ սկզբունքները.....	110

Հապավումների ցանկ

ՍՕՀԱ	Սոցիալական օգնության հայկական ասոցիացիա (Association Armenienne d'Aide Sociale)
ՀՀ դրամ	հայկական դրամ
ԱԿՎՎ	Աջակցված կամավոր վերադարձ և վերաինտեգրում
ՄՓԳԴԳ	Միգրանտների և փախստականների հարցերով գերմանական դաշնային գրասենյակ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՖՀԶՀ	Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամ
FEDASIL	Ապաստան հայցողների ընդունման դաշնային գրասենյակ
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (Gesellschaft fuer Internationale Zusammenarbeit)
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ID	Ինքնությունը հաստատող փաստաթուղթ
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՄՏԿ	Միգրացիայի տեղեկատվական կենտրոն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՆԻՖԳ	Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակ (Office Francais de l'immigration et de l'integration)
ՎՈՒԿ	Վերաինտեգրման ուղղորդման կենտրոն
ՀԳՀՄ	Հայաստանի գործատուների հանրապետական միություն
ԶՊԳ	Զբաղվածության պետական գործակալություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՄՊԾ	Միգրացիոն պետական ծառայություն
ԱՌԻԱ	Առանց ուղեկցության անչափահասներ
ՄԱԿ ՓԳՀ	ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար

ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ԱՄՔՈՐ	Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե
ԹԶ	Թրաֆիքինգի գոհ
ՎՏԲ	Վնեշտորգբանկ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

Նախաբան

Հայաստանում միգրացիան ավելի շատ պայմանավորված է երկրի տնտեսական իրավիճակով և բավարար վարձատրվող աշխատանքների բացակայությամբ, ինչն էլ մղում է մարդկանց եկամուտ փնտրել օտարերկրյա պետությունում: Քանի որ չկան ամբողջությամբ գործող երկկողմ և բազմակողմ աշխատանքային պայմանագրեր, արտագաղթը տեղի է ունենում հիմնականում անկանոն հիմունքներով, և բազմաթիվ հայ քաղաքացիներ օտարերկրյա պետությունում համարվում են անկանոն կարգավիճակ ունեցող, որն էլ իր հերթին մեծացնում է վերադարձի դեպքերը: Մարդիկ վերադարձի դեպքում կարող են հասարակություն հետ ինտեգրվելու խնդիրներ ունենալ:

Հայրենիք վերադարձած անձանց վերախնտեգրումը կայուն վերադարձի բանալին է: Վերադարձած անձինք ցանկանում են, որ իրենց դիտեն որպես հատուկ ուշադրության կարիք ունեցող խմբի: Այդ պատճառով, Հայաստանի քաղաքացիների վերադարձի բարեհաջող վերախնտեգրման համար բարենպաստ միջավայրի ապահովումը չափազանց կարևոր է:

Ուղեցույցի առաջին տարբերակը նախաձեռնվել և հրատարակվել է 2013 թվականին՝ նպատակ ունենալով ուղղորդելու և բարելավելու վերադարձած անձանց տրամադրվող աջակցությունը, որպեսզի նրանք մշտապես վերադառնան հայրենիք:

Սույն երկրորդ հրատարակության նպատակը թարմացված տեղեկատվության տրամադրումն է Հայաստանի քաղաքացիների վերադարձի և Հայաստանում նրանց հաջող վերախնտեգրման հարցերով զբաղվող բոլոր պետական, ոչ պետական և միջգերատեսչական մարմինների դերերի վերաբերյալ: Հաշվի առնելով, որ վերախնտեգրումն ունի համալիր մոտեցում պահանջող տարբեր հայեցակետեր (իրավական, սոցիալական, հոգեբանական, մշակութային, տնտեսական, առողջապահական և այլն), այս ուղեցույցը հետագա աջակցության տրամադրման համար ուղղորդման կետ կձառնայի:

Ուղեցույցում նկարագրվում են վերադարձած անձանց վերախնտեգրման հարցերով զբաղվող պետական և ոչ պետական մարմինների դերն ու գործառնությունները, արժարժվում են վերախնտեգրման հետ առնչվող տարբեր հարցեր, ինչպիսիք վերադարձած անձանց քաղաքացիությունը, բնակությունը, վերադարձի փաստաթղթերը, նրանց մուտքը Հայաստան և հաշվառումը, կենսաթոշակը, նպաստները, տնտեսական ու սոցիալական վերախնտեգրումը, վերադարձած անձանց համար զբաղվածության և ինքնազբաղվածության (ձեռնարկատիրական գործունեության) ծառայությունները, մասնագիտական վերապատրաստման ծառայությունները, վերաորակավորումը, կրթությունը և լեզվի

ուսուցումը, բանկային համակարգն ու միկրովարկավորումը, զինվորական ծառայությունը, մաքսային և հարկային հարցերը, առողջապահությունն ու բժշկական ապահովագրություն են: Ուղեցույցում ներառված են նաև օգտակար հասցեներ և կոնտակտներ:

Ուղեցույցի նպատակը երկրի ներսում վերախնտեգրման ծառայություն մատուցողների ցանցն ամրապնդելն է: Վերախնտեգրման ծառայությունների ոլորտում համագործակցության և դրանց համակարգմանն ուղղված կարողությունների կայուն զարգացման միջոցով կկատարելագործվեն համապատասխան պաշտոնյաների հմտությունները և կբարելավվեն վերախնտեգրման ծառայությունները, որոնք ի վերջո կհանգեցնեն ավելի կայուն վերադարձի:



Իլոնա Տեր-Մինասյան
Միգրացիայի միջազգային
կազմակերպության Հայաստանի
առաքելության գրասենյակի ղեկավար

Բաժին I

Վերաինտեգրման համակարգը Հայաստանում



Գլուխ 1. Վերադարձ

1.1 Քաղաքացիություն

Վերադարձը սկսվում է նպատակակետ երկրում, երբ միգրանտը որոշում է վերադառնալ տուն, անկախ այդ որոշման հիմքերից՝ խոցելի վիճակ, անձնական պատճառներ, կամ պարտադիր վարչական պատիժ:

Ամեն դեպքում, վերադարձի իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 13(2) հոդվածն ասում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքել ցանկացած երկիր, այդ թվում նաև իր սեփականը, և ունի իր երկիր վերադառնալու իրավունք»: Հետևելով այս սկզբունքին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք»:



Ո՞վ է հանդիսանում հայաստանի քաղաքացի

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հետ կապված հարցերը կարգավորվում են 1995 թվականի նոյեմբերի 6-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով: Ելնելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք է բերվում՝

- ծննդով,
- քաղաքացիություն ստանալու միջոցով (հպատակագրում),
- քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով (խմբային հպատակագրում),
- քաղաքացիության ճանաչմամբ (նախկին Հայաստանի Սովետական Մոցխալիստական Հանրապետության քաղաքացիների, նախկին Սովետական Միության հանրապետությունների այլ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց դեպքերում),
- քաղաքացիությունը վերականգնելու միջոցով,
- Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով,
- օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Միգրանտների համար նշանակություն ունի 6-րդ հոդվածի առաջին ենթապարբերությունը, որով սահմանվում է, որ «Հայաստանի

Հանրապետությունից դուրս բնակվելն ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցմանը», ինչպես նաև 7-րդ հոդվածի երկրորդ մասով, ըստ որի, «Հայաստանի Հանրապետությունը, նրա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններն ու դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանելու այլ պետություններում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները...»:

1.2 Փաստաթղթերը

Տարիներ կամ ամիսներ ընդունող երկրում մնալուց հետո տուն վերադառնալը պահանջում է նախապատրաստական միջոցառումներ: Սովորաբար, ամենաառաջին փուլը նախատեսում է սահմանահատում և, համապատասխանաբար, անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերում և ընթացակարգերի պահպանում:

Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, որոնց 16 տարին լրացել է, անկախ բնակության վայրից, կարող են ունենալ Հայաստանի Հանրապետության անձնագիր: Արտասահմանում գտնվող հայերը կարող են դիմել անձնագիր ստանալու կամ անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգելու համար Հայաստանի Հանրապետության դեսպանատներ կամ հյուպատոսական ծառայություններ: Արտասահմանում բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք չունեն վավերական անձնագիր կամ ունեն նախկին Սովետական Միության ժամկետանց անձնագիր, սակայն շտապ պետք է վերադառնան Հայաստան, հյուրընկալող երկրում դեսպանատան կամ հյուպատոսական ծառայության կողմից կարող է տրվել վերադարձի վկայական (ժամանակավոր, միանգամյա օգտագործման ճամփորդական փաստաթուղթ): Վերադարձի վկայական կարող է տրամադրվել նաև հարկադիր վերադարձի դեպքում, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին չունի վավերական ճամփորդական փաստաթուղթ:

Հայաստանում անձնագրերը տրամադրվում են Ոստիկանության Անձնագրային և Վիզաների վարչության, ինչպես նաև երկրի բոլոր շրջաններում գործող Անձնագրային բաժանմունքների կողմից: 2006 թվականին ներմուծվել է Բնակչության ռեգիստրը, որում պահվում են տվյալներ անվան, կացության կարգավիճակի, հասցեի, ծննդյան վայրի և ամսաթվի, սեռի, տրամադրված անձնագրի ու անձը հաստատող փաստաթղթերի ու համապատասխան ամսաթվերի, Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության քաղաքացիության, ինչպես նաև հանրային ծառայությունների համարանիշի մասին: Բնակչության ռեգիստրում առկա են նաև արտասահմանում բնակվող հայերի մասին տվյալներ, որոնք տրամադրվել են Արտաքին գործերի նախարարության կողմից և ձեռք են բերվել դրա հյուպատոսական ծառայություններում: Տվյալները հասանելի են Ոստիկանության, Հայաստանում անձնագրային բաժանմունքների, Արտաքին գործերի նախարարության և Ազգային անվտանգության ծառայության համար: Արտասահմանում գտնվող որոշ հյուպատոսական ծառայություններ նույնպես միացած են Բնակչության ռեգիստրին: 2007 թվականից ի վեր Բնակչության ռեգիստրում նաև նկարներ են պահվում:

2012 թվականին Հայաստանի Հանրապետությունում ներմուծվել է կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր, ինչպես նաև նույնականացման էլեկտրոնային քարտ: Կենսաչափական անձնագիրը ծառայում է որպես ճամփորդական փաստաթուղթ, իսկ նույնականացման քարտը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործման համար: Կենսաչափական անձնագրերը պարունակում են նկար, կենսաչափական անձնագրի տիրոջ մատնադրոշմի թվային պատկերը և էլեկտրոնային ստորագրությունը:

Ինչպես կենսաչափական անձնագրերը, այնպես էլ նույնականացման քարտերը տրվում են տասը տարի վավերականության ժամկետով: Կենսաչափական անձնագրի արժեքը սահմանված է 25 հազար դրամ: Նույնականացման քարտի արժեքը սահմանված է 3 հազար դրամ:

1.3 Վերադարձ և հաշվառում

Վերադառնալիս վավերական անձնագիր ունեցող վերադարձող միգրանտները Հայաստանի Հանրապետություն ժամանելուն պես չեն հաշվառվում սահմանի անցման կետերում, և Հայաստանի Հանրապետությունում վերադարձող միգրանտների թվի վերաբերյալ վիճակագրություն չի կազմվում: Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացին միայն պետք է տեղեկացնի համապատասխան պետական մարմիններին և հաշվառվի նոր հասցեում, եթե նա նախօրոք գրանցել է իր արտագաղթելու հանգամանքը: Ծննդյան, մահվան, ամուսնության և ամուսնալուծության փաստը պետք է գրանցվի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության քաղաքային կամ շրջանային բաժիններից որևէ մեկում: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը նաև վարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման արխիվ:

Այն վերադարձողները, որոնց կյանքում արտասահմանում գտնվելու ժամանակ տեղի են ունեցել պետական գրանցման ենթակա փոփոխություններ (օրինակ՝ երեխայի ծնունդ և այլն), և որոնք դրա մասին չեն տեղեկացրել Հայաստանի համապատասխան դեսպանատանը կամ հյուպատոսական հիմնարկին, վերադառնալուն պես պետք է թարմացնեն իրենց վերաբերյալ գրառումները Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում: Եթե արտասահմանում գտնվելու ժամանակ նրանք օգտագործել են այլ անուններ, և այդ անուններն օգտագործվել են ամուսնության կամ ծննդյան վկայականներում, ապա Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում պետք է տեղեկացնել դրա մասին՝ գրառումներում ուղղումներ կատարելու համար: Քաղաքացիական կացության ակտերի գրառումներում անհրաժեշտ ուղղումներ կատարելու համար փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագիր ԵՄ-ի հետ դեռևս կնքված չէ: Հայաստանի Հանրապետության՝ փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրերն են Սինսկի կոնվենցիան՝ ԱՊՀ անդամ պետությունների համար, ինչպես նաև Հունաստանի, Լիտվայի և Բուլղարիայի հետ կնքված երկկողմ համաձայնագրերը: Այն երկրների դեպքում, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը համաձայնագիր չի կնքել, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունն Արտաքին գործերի նախարարության և Հայաստանի համապատասխան դեսպանատան միջոցով կապվում է հյուրընկալող երկրի հետ՝ նրա պետական մարմինների կողմից տեղեկատվության հաստատման և գրառումներում համապատասխան ուղղումներ կատարելու նպատակով: Քաղաքացիական կացության ակտերի գրառումներում փոփոխություններ մտցնել ցանկացող վերադարձողները պետք է դիմեն քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններ և այնտեղից սկսեն գործընթացը:

1.4 Մուտք Հայաստան, մաքսային ծառայություն

Հայաստանի Հանրապետությունը 2015 թվականի հունվարի 2-ից հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ և դեկլարվում է 2015 թվականին ընդունված «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով: ՀՀ մաքսային կարգավորման մասին օրենքի 249 հոդվածի 11 և 12 կետերով սահմանվում է. «Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանոց



ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հարկադիր տեղահանվածները կամ փախստականները, կարող են առանց մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) վճարման ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը: Սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված արտոնությունից նույն անձը կարող է օգտվել հինգ տարվա ընթացքում մեկ անգամ»:

Իսկ ՀՀ Մաքսային կարգավորման օրենքի 98 հոդվածի 3 կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից

Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող՝ մաքսատուրքի և հարկերի արտոնություն ունեցող ապրանքներն ազատվում են մաքսավճարից:

Բացի այդ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 13 կետի համաձայն՝ «ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը չի հարկվում Ավելացված արժեքի հարկով»:

Ի հավելումն, Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանոց ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը կարող է ներմուծվել մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանման օրվանից ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում:

Ինչ վերաբերում է տեղափոխվող գույքին, որի նկատմամբ կիրառելի է վերոհիշյալ արտոնությունը, ապա ՀՀ Մաքսային կարգավորման օրենքի 5-րդ հոդվածի 1 կետով հստակեցվում է, թե ինչն է համարվում անձնական օգտագործման գույք. «Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանոց ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան և տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում և ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան Հայաստանի Հանրապետություն ժամանելը: Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ առնվազն 6 ամիս հաշվառված լինի Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանոց ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանոց անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը»:

Վերադարձի դեպքում օրենքով սահմանված արտոնություններին ու բարենպաստ մաքսային պայմաններին հավակնելու և դրանցից օգտվելու համար վերադարձող անձը

պետք է 180 օրվա ընթացքում գրավոր դիմում ներկայացնի մաքսային մարմին:

ՀՀ Մաքսային կարգավորման օրենքի 249 հոդվածի 18 և 19 կետերով՝ «Հայաստանի Հանրապետության հաշվառում չունեցող ֆիզիկական անձանց համար Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանման օր է համարվում Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության նպատակով ժամանելուց հետո՝ 180 օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետությունում հաշվառվելու օրը:

Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանելիս Հայաստանի Հանրապետության հաշվառում ունեցող ֆիզիկական անձանց համար Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանման օր է համարվում Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության նպատակով ժամանելու օրվան հաջորդող 180 օրվա ընթացքում մաքսային մարմին գրավոր դիմելու օրը»:

«Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք են համարվում մշտական բնակության ժամանելու օրվան նախորդող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առնվազն հինգ տարի անընդմեջ մշտապես բնակված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ հարկադիր տեղահանվածների և փախստականների, որոնց համար Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առնվազն հինգ տարի անընդմեջ մշտապես բնակվելու հանգամանքը հաշվի չի առնվում:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակված է համարվում այն անձը, որը դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ բնակվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 184 օր և ավելի:

Հարկադիր տեղահանվածները կամ փախստականները, անկախ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության նպատակով ժամանելու հանգամանքից, կարող են մաքսատուրքի արտոնությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը, եթե մաքսային մարմիններ են ներկայացնում համապատասխան կարգավիճակը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տրամադրած փաստաթուղթը»:

ՀՀ Մաքսային կարգավորման մասին օրենք, հոդված 249

1.5 Արտարժույթի ներմուծումը ՀՀ մաքսային սահմանով

ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 29.07.05 թ.-ի թիվ 386 որոշուման համաձայն Հայաստանի Հանրապետության «ֆիզիկական և իրավաբանական անձիք (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների և ինկասսոյի կազմակերպությունների) և անհատ ձեռնարկությունները իրավունք ունեն առանց գրավոր մաքսային հայտարարագիր լրացնելու, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, Հայաստանի Հանրապետություն ներմուծել մինչև 15 հազար եվրոյի համարժեք կանխիկ դրամ» (ՀՀ Կենտրոնական բանկ, 2005թ.):

Վերոնշյալ արժեքը գերազանցելու դեպքում նշված արժույթային արժեքի ներմուծումը ենթակա է մաքսային հայտարարագրման:

Գլուխ 2. Վերաինտեգրում

2.1 Սոցիալ-տնտեսական վերաինտեգրումը և պետական մարմինների դերը

Վերաինտեգրումը կարևոր դեր է խաղում կայուն վերադարձն ապահովելու համար: Սոցիալ-տնտեսական ինտեգրումը վերաբերում է տեղական համայնք վերաինտեգրման սոցիալ-տնտեսական գործընթացին: Ընդհանուր առմամբ ընդունվում է, որ ամենահրատապ անհրաժեշտությունը տնտեսական վերաինտեգրումն է, որպեսզի վերադարձած անձինք և նրանց ընտանիքները կարողանան կայուն եկամուտ ունենալ:

Սոցիալ-տնտեսական վերաինտեգրումը կատարյալ կերպով լրացնում են հոգեբանական, քաղաքական, մշակութային և իրավական վերաինտեգրման աջակցությունը: Ուստի, վերադարձը և վերաինտեգրման օժանդակության տրամադրումը համարվում է Հայաստանի միգրացիայի կառավարման քաղաքականության անքակտելի մասը, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է միգրացիայի պատճառային խթաններին:

Վերադարձի և վերաինտեգրման նպատակով տրամադրվող աջակցությունը կազմում է միգրացիայի կառավարման¹

համակարգի մի մասը: Հայաստանում միգրացիան հիմնականում կարգավորվում է «Հայաստանի Հանրապետությունում Միգրացիոն պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգով»², որտեղ սահմանվում են Հայաստանի միգրացիոն քաղաքականության հիմնական մարտահրավերները և ռազմավարությունները, որոնցից մեկն անմիջականորեն վերաբերում է Հայաստանի քաղաքացիների վերադարձին, ինչպես նաև հայրենիքում նրանց վերաինտեգրման նպատակով տրամադրվող աջակցությանը:



1 ՄՄԿ բառարանի համաձայն՝ «միգրացիայի կառավարում» տերմինն ընդգրկում է ազգային համակարգում առկա պետական բազմաթիվ գործառնություններ՝ ուղղված միջսահմանային միգրացիայի կանոնակարգված ու քաղաքակիրթ կառավարմանը, մասնավորապես՝ տվյալ երկրի սահմաններում օտարերկրացիների մուտքը և ներկայությունը կառավարելուն, փախստականներին և պաշտպանության կարիք ունեցող այլ անձանց պաշտպանելուն: Դա վերաբերում է քաղաքականության մշակման, միգրացիայի ոլորտի առանցքային խնդիրներին օրենսդրական և վարչական արձագանքի կապակցությամբ որդեգրված մոտեցմանը:

2 Ընդունվել է Հայաստանի Հանրապետության թիվ 51 Արձանագրային որոշմամբ՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին:

Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի հիմնական գործողություններն են՝

- համացանցային տեղեկատվական համակարգերի հետագա կատարելագործումը,
- միգրանտների հետ աշխատող պետական մարմիններում (օրինակ՝ Միգրացիոն պետական ծառայություն և այլ նախարարություններ) Հայաստանի Հանրապետություն վերադարձողների համար խորհրդատվական բնույթի ծառայությունների տրամադրման կազմակերպում,
- բանակցությունների վարում ընդունող երկրների հետ՝ նրանց օժանդակությամբ վերադարձողներին Հայաստանում վերախնտեգրման աջակցություն ցուցաբերելու հարցերի շուրջ,
- վերադարձած անձանց զբաղվածության ծրագրերի իրականացում:

Պետության դերը շատ մեծ է վերախնտեգրման գործընթացում, որտեղ բոլոր պետական հաստատությունները մասնակցում են իրենց վերապահված լիազորությունների համապատասխան: Միգրացիայի հարցերը համակարգող և քաղաքականություն մշակող պետական մարմինը Տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայությունն է: ՄՊԾ-ի լիազորությունները հաստատվել են 2009 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1515-Ն որոշմամբ: ՄՊԾ-ը իրականացնում է «Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի» վերահսկողությունը:

2.2 Միգրանտների ուղղորդման կենտրոնները

Մինչ օրս ՀՀ - ում գոյություն չունի պաշտոնական ուղղորդման համակարգ: Պոտենցիալ և վերադարձած միգրանտները կարող են աջակցություն ստանալ յոթ միգրացիոն ռեսուրս կենտրոններից (ՄՌԿ) մեկում, որոնք գործում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ջբաղվածության պետական գործակալության (ԶՊԳ) ներքո: ՄՌԿ-երը, որոնք գտնվում են երկրի վեց մարզերում, իսկ մեկը՝ Երևան քաղաքում, ստանձնել են ուղղորդման համակարգի գործառույթներ և միգրանտներին կոնդեկացնեն առկա ծառայությունների մասին:

Աղյուսակ 1՝ ՄՌԿ-ների գրասենյակները՝



Աղբյուր՝ http://hy.wikipedia.org/wiki/Պատկեր:map_Am.gif

ՄՌԿ-ն ունի երկու թիրախային խումբ՝ հնարավոր աշխատող միգրանտներ և Հայաստան վերադարձած միգրանտներ: ՄՌԿ-ն հնարավոր աշխատող միգրանտներին տրամադրում է տեղեկություններ հյուրընկալող երկրում վիզայի ստացման ընթացակարգերի, օրենսդրության և աշխատանքային հնարավորությունների մասին: Այն նաև տեղեկացնում է վերադարձողներին առկա վերախնտեգրման ծրագրերի մասին, նրանց ուղղորդում է դեպի պետական գրադավաժության ծրագրեր, իրականացնում է վերադարձած անձանց հմտությունների գնահատում և հրավիրում է գործատուներին ու աշխատանքի հավանական թեկնածուներին այսպես կոչված աշխատանքի ակումբներ:³

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը ներդրվել⁴ է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2013 թվականին և դեռ ընթացքի մեջ է: Այս համակարգով բոլոր սոցիալական ծառայությունները միավորվում են «մեկ տանիքի ներքո»: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործարկվել են 18 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (ՀՄԾՏԿ): Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի նպատակը արդյունավետությունը բարձրացնելը և պետական մարմիններում թղթաբանությունը կրճատելն է, սակայն, միևնույն ժամանակ նրանք անհատական մոտեցում են ապահովում շահառուներին, հատկապես՝ ընտանիքներին, և տրամադրում են մեկ վայր, որտեղ կարող են ստանալ բոլոր մատչելի տեղեկությունները, այդ թվում՝ սոցիալական ապահովության, սոցիալական ծառայությունների, գրադավաժության ծառայության և բուժհաստատությունների վերաբերյալ: Ինտեգրված սոցիալական ծառայությունները

3 Աշխատանքի ակումբներն այնպիսի միջոցառումների անցկացման վայր են, որտեղ գործատուները ներկայացնում են իրենց ընկերությունները աշխատանք փնտրող խմբին:

4 Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի հայեցակարգը կարելի է գտնել հետևյալ կայքում՝ www.mlsa.am/home/links.php?id_link=124 (հայերեն), իսկ դրան առնչվող քննարկումները՝ www.mlsa.am/up/ALL%20text%20integrvac.pdf (հայերեն)

աշխատանքներ են տանում այն սոցիալական աշխատողների հետ, որոնք իրականացնում են ընտանիքների գնահատումը և մշակում են կոնկրետ ընտանիքի կարիքներին ուղղված անհատական սոցիալական աջակցության և պաշտպանության ծրագրեր:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ստեղծվել է նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքը (<http://esocial.am>): Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, սոցիալական աջակցության շրջանակներում նրանց կողմից իրականացվող գործառույթների և միջոցառումների ամբողջությունն է: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը համագործակցության ապահովման միջոցով կանխարգելում է անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, վերացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառները և հետևանքները: Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների կողմից, որտեղ հաճախորդների սոցիալական կարիքների բավարարման գործընթացն իրականացվում է մեկ վայրում: Կայքում գետեղված են ոլորտի հետ առնչություն ունեցող հարցերի պատասխանները, իսկ պատասխանը չգտնելու դեպքում, կարելի է դիմել առգիծ խորհրդատուներին:

2.3 Վերաինտեգրման ծրագրերը

Վերադարձած անձանց վերաբերող հարցերը չեն կարգավորվում մեկ կոնկրետ նախարարության կողմից, քանի որ վերադարձած անձինք առանձին խումբ չեն կազմում



և սահմանվում են որպես աշխատանք ունեցող, գործազուրկ, թոշակառու և այլն, այն է՝ վերաինտեգրման գործընթացում ներգրավված են մի շարք նախարարություններ (Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012 - 2016 թթ. գործողությունների ծրագրի համաձայն):

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն, վերադարձած միգրանտները համարվում են աշխատաշուկայում անմրցունակ և կարող են օգտվել զբաղվածության պետական ամենամյա ծրագրերից, որոնք աջակցում են

վերադարձողների վերաինտեգրմանը՝ զբաղվածության ապահովման միջոցով:

Ներկայումս Հայաստանում գործում են չորս կազմակերպություններ, որոնք իրականացնում են վերաինտեգրման ծրագրեր վերադարձած անձանց՝ զբաղվածության, մասնագիտական վերապատրաստման և սոցիալական բարեկեցության ու այլ ոլորտներում վերաինտեգրումը դյուրացնելու նպատակով: Այդ կազմակերպություններն են՝

- «Հայկական կարիտասը»,
- «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունը;
- «Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամը» (ՖՀՉՀ),
- «Միգրացիայի միջազգային կազմակերպությունը» (ՄՄԿ),
- Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը (ՆԻՖԳ):

Վերաինտեգրման ծրագրերի մեծ մասի շահառուները կոնկրետ երկրներից վերադարձած անձինք են, որոնց տրամադրվում է տարբեր չափերի և տարբեր տեսակի աջակցություն: Վերաինտեգրման յուրաքանչյուր ծրագիր, ըստ դոնորի, ունի սահմանված ժամկետ: Մեծ մասամբ, նշված կազմակերպություններն աջակցություն են տրամադրում վերադարձող անձին դեռևս հյուրընկալող երկրում և շարունակում են նրանց վերաինտեգրման աջակցություն ցուցաբերել արդեն Հայաստան ժամանելուց հետո: Նշված ծրագրերի նպատակը վերաինտեգրման նախնական փուլում աջակցություն տրամադրելը և, հետևաբար, կայուն վերաինտեգրմանը նպաստելն է:

2.3.1 «Հայկական կարիտաս» կազմակերպությունը

«Հայկական կարիտաս» կազմակերպությունը, որը գրանցված բարեգործական հասարակական կազմակերպություն է, ստեղծվել է 1995 թվականին և գործունեություն է ծավալում չորս ռազմավարական ոլորտներում, այն է՝ **սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և համայնքային զարգացում; միգրացիա, ինտեգրում և թրաֆիքինգի կանխարգելում; շահերի պաշտպանություն, լոբբինգի և ցանցային համագործակցություն; և արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և արձագանքում:** Նրանց կողմից իրականացվող ծրագրերի միջոցով աջակցություն է տրամադրվում խոցելի խմբերին, ինչպես օրինակ՝ Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Արարատի մարզերի և Երևան քաղաքի տարեցներին, որը երեխաներին, հիվանդ երեխաներին, ծանր իրավիճակում հաիտնված հղի կանանց ու հաշմանդամներին: Այն խթանում է նաև այնպիսի ենթակառուցվածքների զարգացումը, ինչպիսիք ջրամատակարարման խողովակաշարերի և ոռոգման համակարգերի կառուցումը, դպրոցների վերանորոգումն ու համայնքային կենտրոնների կառուցումն են: «Հայկական կարիտաս» կազմակերպության գլխամասային գրասենյակը գտնվում է Գյումրիում: «Հայկական կարիտաս» կազմակերպության Երևանի գրասենյակը զբաղվում է միգրացիայի և թրաֆիքինգի հարցերով: 2006 թվականին «Հայկական կարիտաս» կազմակերպությունն սկսեց համագործակցություն ծավալել «Կարիտաս Բելգիա» կազմակերպության հետ, որտեղ բնակվում են մեծ թվով հայ միգրանտներ:

2.3.2 Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը (ՆԻՖԳ)

Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը հիմնադրվել է 2005 թվականին՝ որպես Ֆրանսիայի Հանրապետության ներքին գործերի նախարարության ենթակայության ներքո գործող պետական մարմին, որը պատասխանատու է միգրացիայի քաղաքականության իրականացման համար: Հայաստանում ՆԻՖԳ-ի ներկայացուցչությունն ստեղծվել է 2012 թվականի դեկտեմբերին և պատասխանատու է հայկական ծագում ունեցող՝ վերադարձած անձանց վերաինտեգրման ծրագրերն իրականացնելու համար:

ՆԻՖԳ-ը մատուցում է ծառայություններ վերադարձող միգրանտների սոցիալական և տնտեսական կայուն վերաինտեգրումն ապահովելու նպատակով հետևյալ ծրագրերի շրջանակում՝ «Միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի կարողությունների հզորացում» կենտրոնանալով վերաինտեգրմանն ուղղված միջոցառումների վրա» և «Ֆրանսիայից Կամավոր վերադարձ և վերաինտեգրման աջակցություն Հայաստանում և Վրաստանում»:

ԵՄ-Հայաստան շարժունակության շուրջ գործընկերության շրջանակներում ԵՄ-ի Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար «Միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի կարողությունների հզորացում» կենտրոնանալով վերաինտեգրմանն ուղղված միջոցառումների վրա» ծրագիրն իրականացվում է Բելգիայի, Բուլղարիայի, Չեխիայի Հանրապետության, Ֆրանսիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Լեհաստանի և Ռումինիայի կառավարությունների, ինչպես նաև Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) համագործակցությամբ: Ծրագրի նպատակները մշակված են այնպես, որ հասցեագրվեն հետևյալ ոլորտներին՝ կարողությունների զարգացումը, տեղեկատվական արշավների իրականացումը, Սփյուռքի և Հայաստան կամավոր կամ հարկադրաբար վերադարձող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվող զարգացման և վերաինտեգրման աջակցության միջև կապերը: Թիրախային խմբերի մեջ ընդգրկվում են ԵՄ անդամ պետություններից և աշխարհագրական այլ տարածքներից վերադարձած բոլոր անձինք: Ծրագրով նախատեսվում են մի շարք գործողություններ և, ի թիվս այլ գործողությունների, նաև Սփյուռքին ուղղված ծրագիրը, որն իրականացվում է Հայաստանում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից:

Վերաինտեգրման աջակցությունը Ֆրանսիայից վերադարձողների համար կարող է լինել երեք տեսակ՝ սոցիալական աջակցություն, աշխատանքի տեղավորում՝ վերապատրաստման հնարավորությամբ և փոքր բիսնեսի ստեղծում:

2.3.3 «Ֆրանս-հայկական զարգացման» հիմնադրամը (ՖՀԶՀ)

«Ֆրանս-հայկական զարգացման» հիմնադրամն ստեղծվել է 2004 թվականին Սոցիալական օգնության հայկական ասոցիացիայի կողմից (ՍՕՀԱ): ՍՕՀԱ-ն հիմնադրվել է 1890 թվականին և Ֆրանսիայում հայկական համայնքում հիմնական գործունեություն ծավալողն է: 2005 թվականից ի վեր ՍՕՀԱ-ն և ՆԻՖԳ-ը ՖՀԶՀ-ի հետ Ֆրանսիայից Հայաստան կամավոր վերադառնալու հարցում օժանդակություն են տրամադրում Հայաստանի քաղաքացիներին՝ 2005 թվականին Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Վերադարձ ակունքներին» ծրագրի շրջանակներում, որի նպատակը Հայաստան կամավոր վերադարձի գործընթացը դյուրացնելն էր: Ծրագիրը դեռևս իրականացվում և ֆինանսավորվում է տարբեր կառույցների կողմից:

2.3.4 Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ)

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) միգրացիայի ոլորտում առաջատար միջկառավարական կազմակերպություն է: ՄՄԿ-ն 1993 թվականից ի վեր գործունեություն է ծավալում Հայաստանում և կարևոր դերակատարություն է ունեցել Հայաստանում միգրացիայի կառավարման բարեփոխումների գործում՝ լայնածավալ աշխատանք կատարելով կարողությունների զարգացման, քաղաքականության հարցերով խորհրդատվության և մշակման, ուսումնասիրությունների իրականացման,

տեխնիկական աջակցության, հանրային իրազեկության բարձրացման, ինչպես նաև միգրանտների տարբեր կատեգորիաներին տրամադրվող անմիջական աջակցության ուղղությամբ: ՄՄԿ-ն հիմնականում գործունեություն է ծավալում հետևյալ ուղղություններով՝ միգրացիայի ոլորտում տեխնիկական համագործակցություն, միգրացիոն քաղաքականություն և հետազոտություններ, միգրացիայի միջազգային իրավունք և միգրանտների իրավունքներ, սահմանների, ինքնությունը հաստատող փաստաթղթերի կառավարում, աշխատանքային միգրացիա, միգրացիա և առողջապահություն, արտակարգ իրավիճակների ժամանակ և դրանցից հետո իրականացվող աշխատանքներ, միգրացիայի վերաբերյալ տվյալներ, միգրանտներին, ինչպես նաև թրաֆիքինգի զոհ դարձած խոցելի միգրանտներին տրամադրվող աջակցություն:

Միգրանտներին իրենց ծագման երկրներում վերաինտեգրման աջակցության ցուցաբերումը կայուն վերադարձ ապահովելու կարևոր տարրերից է: ՄՄԿ-ն և ծագման երկրների գործընկերները միգրանտներին տրամադրում են սոցիալ-տնտեսական աջակցություն՝ խթանելու իրենց ինքնաբավությունը և ներդրումներն իրենց տեղական համայնքներում: Այնուամենայնիվ, կայուն վերադարձ կարող է ապահովվել միայն սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգահեռ:

Սովորաբար, պոտենցիալ վերադարձող անձանց ՄՄԿ ուղեգրում են հյուրընկալող երկրի մարմինները, ինչպես օրինակ՝ ներգաղթի ծառայությունը, ապաստանի տեղական կենտրոնները կամ ՀԿ-ները: Վերադարձած անձանց տրամադրվող աջակցությունը բազմաբնույթ է: Այն ներառում է ինչպես վերադարձի աջակցություն, ապահովելով մինչև վերադարձը տեղեկատվության տրամադրումը, խորհրդատվությունը, կամավոր վերադարձի կազմակերպումը, այնպես էլ այն սխեմաները, որոնց միջոցով տրամադրվում է երկարաժամկետ վերաինտեգրման աջակցություն և ապահովվում է միգրանտների տնտեսական կենսունակությունն այն ժամանակ, երբ նրանք վերադառնում են իրենց ծագման երկրներ և վերադառնալիս վերականգնման աջակցությունը (բուժման համար վերադարձած անձանց տրամադրվող աջակցությունը) և վերաինտեգրման աջակցությունը (սովորաբար, ելնելով անհատական կարիքներից, աջակցությունը ցուցաբերվում է այն երկրների կառավարությունների կողմից տրամադրված դրամաշնորհների միջոցով, որտեղից միգրանտը վերադարձել է՝ իր բիզնեսը սկսելու կամ կրթություն ստանալու նպատակով):

ՄՄԿ Հայաստանի առաքելությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական նախարարության ենթակայության ներքո հիմնել է Միգրացիոն ռեսուրս կենտրոն: ՄՄԿ Հայաստանի առաքելությունը 2000 - 2015 թվականների ընթացքում աջակցել է 6726 միգրանտների, ովքեր վերադարձել են Հայաստան հիմնականում եվրոպական երկրներից: Ներկայումս ՄՄԿ-ն Հայաստանի պետական մարմինների հետ համագործակցությամբ վերադարձի և վերաինտեգրման ոլորտում իրականացնում է մի շարք ծրագրեր: Ավելին, ՄՄԿ-ն տարբեր, հիմնականում եվրոպական երկրներից վերադարձած անձանց աջակցություն է տրամադրում անհատական սկզբունքով:⁵

5 Ստորև ներկայացված ծրագրերը վերադարձի և վերաինտեգրման ծրագրերից մի քանիսն են, որոնք ՄՄԿ-ն ներկայումս իրականացնում է՝ i) «Միկրոձեռնարկությունների զարգացման» (ՄՉՁ) ծրագիր, ii) «Նախկին ապաստան հայցողների վերադարձը» բեզիսական ծրագիր (կառավարվում է ՄՄԿ Բեզիսայի առաքելության կողմից), iii) «Շվեյցարիայի վերաինտեգրման աջակցություն» ծրագիր (կառավարվում է ՄՄԿ Բեռնի առաքելության կողմից), iv) «Խորհրդատվությունը ԿՎՏԿ-ի կողմից. ինքնուրույն վերադարձին առնչվող հարցումներ» ծրագիր (կառավարվում է ՄՄԿ Գերմանիայի առաքելության կողմից), v) «Բժշկական հիմնահարցերի վերաբերյալ ծագման երկրների տեղեկատվության տրամադրում» ծրագիր (կառավարվում է ՄՄԿ Ավստրիայի առաքելության կողմից. ծրագիրը մեկնարկել է 2008 թվականին և դեռևս իրականացվում է), vi) «Աջակցվող կամավոր

ԱԿՎՎ-ի տարբեր ծրագրեր իրականացնող ՄՄԿ ռազմավարության հիմքում, ընկած է միգրացիայի քաղաքակիրթ և կանոնակարգված կառավարումը, այդ թվում՝ միգրացիոն միջազգային աջակցություն խնդրող անձանց՝ ապահով, հուսալի, ճկուն և ծախսարդյունավետ ծառայությունների տրամադրումը:

2.4 Խոցելի միգրանտներին տրամադրվող վերախնտեգրման աջակցությունը

Խոցելի միգրանտները,⁶ ինչպես օրինակ՝ տարեց միգրանտները, թրաֆիքինգի ենթարկված միգրանտները (ԹՁ-ներ),⁷ առողջական խնդիրներ ունեցող միգրանտները և առանց ուղեկցության անչափահասները (ԱՌԽԱ-ները) գտնվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատասխանատվության ներքո:⁸

Թրաֆիքինգի զոհերին տրամադրվող աջակցությունը կարգավորվում է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին:

Օրենքը կարգավորում է մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված լինելու մեջ կասկածվող անձանց հայտնաբերման պահից նրանց ուղղորդման, նրանց վերաբերյալ տեղեկատվության կուտակման և փոխանակման, որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ նույնացման, աջակցության և պաշտպանության ապահովման, մտորման ժամկետի ընձեռնման գործընթացների հետ կապված հարաբերությունները: Օրենքի նպատակը մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված անձանց շահերից բխող՝ նրանց հայտնաբերումը, պատշաճ նույնացումը, աջակցության,

վերադարձ Լեհաստանից և վերախնտեգրում» (կառավարվել է ՄՄԿ Լեհաստանի առաքելության կողմից), vii) «Բի-Քոնեքթիդ» ծրագիր (կառավարվել է ՄՄԿ Բելգիայի առաքելության կողմից), viii) «Նիդեռլանդներից օտարերկրացիների վերադարձ և ներգաղթ» (կառավարվում է ՄՄԿ-ի Նիդեռլանդների առաքելության կողմից) ծրագիր:

- 6 «Խոցելի խումբ» նշանակում է հասարակության ցանկացած խումբ կամ մաս, որի համար ավելի մեծ է խտրական գործելակերպերի, բռնության, բնական կամ բնապահպանական աղետների ենթարկվելու, կամ տնտեսական բարոյությունների բախվելու վտանգը, քան պետության սահմաններում հասարակության այլ խմբերի համար: Այն ներառում է հասարակության ցանկացած խումբ կամ մաս (ինչպես օրինակ՝ կանայք, երեխաներ, ծերեր, սահմանափակ կարողություններով անձինք, բնիկ ժողովուրդներ կամ միգրանտներ), որոնք առավել խոցելի են հակամարտությունների և ճգնաժամի ժամանակ: Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան
- 7 «Մարդկանց թրաֆիքինգի զոհ» նշանակում է, **ցանկացած ֆիզիկական անձ, որը ենթարկվում է մարդկանց թրաֆիքինգի:** «Շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալն ուժի սպառնալիքով կամ ուժի, կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձեռք կաշառելու ճանապարհով»: Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան
- 8 Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ունի թրաֆիքինգի դեմ պայքարի ռեսուրս կենտրոն

պաշտպանության և հասարակությանը սոցիալական վերաինտեգրման արդյունավետ ապահովումն է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների միջև, ինչպես նաև հասարակական, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության հետ ռազմավարական համագործակցության ընթացակարգերի ձևավորմամբ:

Թրաֆիքինգի զոհերի և առանց ուղեկցության անչափահասների վերադարձին աջակցող կառույցներն են ՄՄԿ-ն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Միգրացիոն պետական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ՆԻՖԳ, «Հույս և օգնություն» ու ԱՄԶՈՐ կազմակերպությունները:

«Առանց ուղեկցության երեխաներ» տերմինը, որը հայտնի է նաև որպես ընտանիքից առանձնացված երեխաներ, նշանակում է իրենց քաղաքացիության երկիր չհանդիսացող երկրում չափահասության տարիքի չհասած անձինք, որոնք մնացել են առանց ծնողի, խնամակալի կամ որևէ այլ չափահաս անձի ուղեկցության, որն օրինականորեն կամ սովորույթի ուժով պատասխանատվություն է կրում նրանց համար: Առանց ուղեկցության երեխաներն առանձնահատուկ խնդիրներ են առաջացնում սահմանային վերահսկողության ստորաբաժանման ծառայողների համար, քանի որ փաստաթղթային խնդիրներ ունեցող՝ քաղաքացի չհանդիսացող չափահաս անձանց նկատմամբ կիրառվող կալանքը և մյուս գործելակերպերը կարող են նպատակահարմար չլինել երեխաների դեպքում:⁹ Առանց ուղեկցության անչափահասների կամավոր վերադարձի աջակցությունը, *միջազգային մակարդակով*, իրականացվում է «Երեխաների լավագույն շահերը սահմանող» ուղեցույցի սկզբունքի և ՄԱԿ ՓԳՀ-ի «Անչափահասների հայրենադարձման ուղեցույցներին» համապատասխան: ԵՄ մակարդակով առկա են երկու կարևոր փաստաթղթեր՝ Խորհրդի 1997 թվականի հունիսի 26-ի բանաձև «Առանց ուղեկցության՝ երրորդ երկրների քաղաքացի հանդիսացող անչափահասների մասին»¹⁰ և Եվրոպական խորհրդի եզրակացություններ «Առանց ուղեկցության անչափահասների մասին»:¹¹

ՄՄԿ-ն գնահատում է առանց ուղեկցության անչափահասների դիմումները՝ հաշվի առնելով հետևյալ դրույթները՝ ընտանիքը պարզելը, նախամեկնման բժշկական զննությունը, սոցիալ-հոգեբանական կարիքները, ծագման երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակը, իրավական նկատառումները, ծագման երկրներում առկա վերաինտեգրման սխեմաները, վավերական ճամփորդական փաստաթղթեր ձեռք բերելու համար տրամադրվող աջակցությունը:

ՄՄԿ-ն խոցելի միգրանտների դեպքում կազմակերպում է նաև առողջական վիճակի գնահատում, տեղաշարժման ժամանակ բժշկական օգնություն (այդ թվում՝ բժշկական էսկորտ ծառայություններ), ինչպես նաև վերադարձից հետո մշտական խնամքի տրամադրում: Բժշկական գաղտնապահությունն երաշխավորվում է գործընթացի ամբողջ ընթացքում:

9 Տե՛ս Միգրացիայի ոլորտի տերմինների բառարանը:

<http://publications.iom.int/books/international-migration-law-ndeg25-glossary-migration>

10 «Առանց ուղեկցության՝ երրորդ երկրների քաղաքացի հանդիսացող անչափահասների մասին»

Խորհրդի 1997 թվականի հունիսի 26-ի բանաձևը կարելի է գտնել հետևյալ համացանցային հասցեով՝

<http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:1997:221:0023:0027:EN:PDF>

11 «Առանց ուղեկցության անչափահասների մասին» Խորհրդի 2010 թվականի հունիսի 3-ի եզրակացությունները կարելի է գտնել հետևյալ համացանցային հասցեով՝

<http://avrr.belgium.iom.int/images/stories/uam%20eu.pdf>

Տարեց միգրանտների աջակցություն ցուցաբերելիս մեծապես կարևորվում է նրանց առողջական վիճակը: Մեծ մասամբ տարեցները պահանջում են, որ իրենց տեղավորեն խնամքի կենտրոններում: Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է պետական ծերանոցների գործունեության համար:

«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ Կառավարության թիվ 318-Ն որոշմամբ սահմանվում է այն անձանց ցանկը, որոնք պատկանում են հասարակության սոցիալապես անապահով խմբերին և որոնք իրավունք ունեն ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում: Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ամբողջական ցանկը ներկայացված է **1-ին հավելվածում**:

Պետական երաշխավորված անվճար հիվանդանոցային առողջապահական ծառայություններ ստանալու համար հիվանդները պետք է ներկայացնեն ուղեգիր տեղամասային պոլիկլինիկաներից և անձնագիր, բացառությամբ «այն անհետաձգելի դեպքերի, որոնք չեն պահանջում շուրջօրյա հսկողություն, երբ հիվանդը չունի անձը հաստատող փաստաթուղթ», իսկ սոցիալապես անապահով անձինք և նրանք, ովքեր ընդգրկված են առանձին / հատուկ / խմբերում պետք է ներկայացնեն անձը հաստատող փաստաթուղթ և սոցիալական կարգավիճակը հաստատող փաստաթղթերը (ՀՀ առողջապահության նախարարություն, 2012b):

Համաձայն Ջբաղվածության մասին ՀՀ օրենքի, 2015 թվականից բոլոր պետական կառույցները, որոնք ունեն 100-ից ավելի աշխատող, պետք է 3 տոկոսի չափով մաս հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձանց աշխատանքով ապահովեն: 2017-ից նույն պահանջը, պարզապես 1 տոկոսի չափով, դրվելու է մասնավոր ձեռնարկությունների առջև:

2.4.1 Հայաստանում՝ վերադարձած անձանց և բնակչության խոցելի խմբերի հետ աշխատող կազմակերպությունները

- «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
- Հայկական կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ)
- «Հայկական կարիտաս» կազմակերպությունը
- «Ֆրանս-հայկական զարգացման» հիմնադրամը (ՖՀԶՀ)
- Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակը (ՆԻՖԳ)
- «Հույս և օգնություն» կազմակերպությունը
- Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ)

Գլուխ 3. Վերաինտեգրումն ըստ ճյուղերի

3.1 Ջրաղվածությունը

3.1.1 Պետական մարմինները

Ջրաղվածության պետական գործակալությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանձնացված ստորաբաժանում է, որի խնդիրը զբաղվածության կարգավորման պետական քաղաքականության իրականացումն է: Գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է «Ջրաղվածության մասին» ՀՀ օրենքի, գործակալության կանոնադրության և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի շրջանակներում:



Գործակալության նպատակներն են աշխատանք փնտրող անձի կայուն զբաղվածության ապահովմանը միտված զբաղվածության պետական ծրագրերի իրականացման ապահովումը և աշխատուժի պահանջարկի բավարարման և առկա աշխատուժի առաջարկի արդյունավետ իրացման ապահովումը:

Ջրաղվածության պետական ծրագրերն են՝

- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում»,
- «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում»,
- «Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում»,
- «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում»,
- «Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում»,
- «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում»,
- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում»,
- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում»,
- «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում»,

- «Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում»,
- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում»:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն, վերադարձած միգրանտները համարվում են աշխատաշուկայում անմրցունակ և կարող են օգտվել զբաղվածության պետական 11 ծրագրերից: ՀՀ Կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված 14 հավելվածի 2-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն, անձի արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկը հանդիսանում է աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակ ճանաչելու պայմաններից մեկը և անձը համարվում է անմրցունակ, եթե՝

- վերադարձել է արտերկրից, սակայն վերադառնալուց հետո մեկ ամսվա ընթացքում չի կարողացել դառնալ զբաղված,
- վերջին երեք տարվա ընթացքում մեկից ավելի անգամ մեկնել է արտերկիր և յուրաքանչյուր անգամ մեկնման երկրում բնակվել է մեկ ամսվանից ավելի,
- վերջին երեք տարվա ընթացքում մեկ տարվանից ավելի բնակվել է արտերկրում:

Ծրագրերին մանրամասն կարելի է ծանոթանալ Զբաղվածության պետական գործակալության պաշտոնական կայքից՝ www.employment.am:

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (ՄԵՆ) մշակում և իրականացնում է պետական երիտասարդական քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013-2017 թվականների քաղաքականության գերակայություններից են աշխատատեղերի ստեղծումը, կրթություն ստանալու հնարավորության ապահովումը և երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը:

3.1.2 Զբաղվածության մասնավոր գործակալությունները

Հայաստանում կան բազմաթիվ զբաղվածության մասնավոր գործակալություններ: Նշված գործակալությունները համագործակցում են Արդյունաբերողների և գործարարների միության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, Փոքր և միջին ձեռնարկությունների միության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների հետ:

Հայաստանի գործատուների հանրապետական միությունն (ՀԳ-ՀՄ) ապահովում է գործարար միջավայրի բարելավումը և գործարար համայնքի շահերի պաշտպանությունը: ՀԳ-ՀՄ-ն միավորում է վեց տարածքային և հինգ ճյուղային միություններ և ունի մոտ 10000 անդամ, այդ թվում՝ ՓՄՁ-ներ և անհատ ձեռնարկատերեր: Դրա ճյուղային միություններից մեկն է Հայաստանում Զբաղվածության մասնավոր գործակալությունների միությունը: **Հայաստանի գործատուների հանրապետական միության Զբաղվածության մասնավոր**

գործակալությունների ճյուղային միությունը հիմնադրվել է 2010 թվականին: ՉՄԳ-ի միության առաքելությունն է լինել ուժեղ և ազդեցիկ կառույց, որն աջակցություն և շահերի պաշտպանություն է ապահովում հայաստանյան զբաղվածության մասնավոր գործակալություններին, ինչպես նաև ստեղծում է հարմարավետ իրավական միջավայր՝ իրենց գործում հաջողություններ արձանագրելու համար: ՉՄԳ-ն Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ համատեղ մշակել է Հայաստանում զբաղվածության մասնավոր գործակալությունների համար Վարքագծի կանոններ (տե՛ս **2-րդ հավելվածը**): ՉՄԳ-ների գործունեությունը Միության անդամ զբաղվածության մասնավոր գործակալություններին թույլ է տալիս համագործակցել պետական կառույցների և կազմակերպությունների հետ, փոխանակել տեղեկություններ, մասնակցել օրենքի վերաբերյալ քննարկումներին և ներգրավված լինել աշխատողների տեղավորման տարբեր ծրագրերում:

3.1.3. Ինքնագրավածությունը

Ինքնագրավածությունը և ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար չափորոշիչները, ինչպես նաև ՓՄՁ-ներին տրամադրվող պետական աջակցության հիմնական ուղղությունները: Հայաստանում կան մի քանի կազմակերպություններ, որոնք վերադարձող անձանց տրամադրում են խորհրդատվություն և ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև աջակցում են նրանց ձեռնարկատիրական գործունեության և ոչ վարձու աշխատանքի զարգացմանը: Օրինակ՝ **Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը** (ՓՄՁՁԱԿ) մի քանի տեսակի օգնություն է տրամադրում մինչև երեք տարի պետական գրանցում ունեցող, ձեռնարկատիրոջ մտածելակերպով անհատներին՝ անկախ նրանց տարիքից և կրթությունից: Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ներ ստեղծելը և խթանելը, ինչպես նաև նոր աշխատատեղեր ստեղծելն է:

3.2 Առողջապահությունը

3.2.1. Ընդհանուր և իրավական դրույթներ

Հայաստանի Հանրապետությունում բժշկական ծառայությունների տրամադրումը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով, ինչպիսիք են՝ ՀՀ Սահմանադրությունը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը և «Պետական բյուջեի մասին» օրենքը: Ըստ ՀՀ Սահմանադրության Հոդված 34-ի՝ «Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Բժշկական օգնության և սպասարկման կարգը սահմանվում է օրենքով: Պետությունն իրականացնում է բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը»:

Սահմանադրության այս նորմի կատարումն ապահովվում է մի շարք իրավական ակտերով: Օրինակ՝ ՀՀ Կառավարության 4 մարտի 2004 թվականի N 318-Ն որոշումը

կարգավորում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը և ֆինանսավորումը:

Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարությունը առողջապահության բնագավառի գործունեությունը համակարգող մարմինն է, որը պատասխանատու է առողջապահության բնագավառում պետական ռազմավարության և քաղաքականության մշակման ու իրականացման համար:

Մինչ այժմ, Առողջապահության նախարարությունը մշակել է առողջապահական քաղաքականության և ռազմավարության նախագծեր՝ Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին (1996):



Օրենքի մի քանի դրույթներ՝

- Առաջնային բժշկական օգնությունը (ԱԲՕ) անվճար տրամադրվում է յուրաքանչյուր մարդու՝ պետական առողջապահական ծրագրերի շրջանակներում:
- Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:
- Քաղաքացիներն իրավունք ունեն ընտրել իրենց բուժսպասարկողին:
- Առողջապահական ծառայությունների ֆինանսավորման աղբյուրներն են՝ պետբյուջեն, ապահովագրությունը, ուղղակի վճարումները և օրենքով չարգելված այլ միջոցներ:
- Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի օգտվել անվճար բժշկական սպասարկումից՝ պետության կողմից երաշխավորված ծրագրերի շրջանակում:
- Անձը, որը տառապում է շրջապատի համար վտանգավոր հիվանդությամբ, իրավունք ունի ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և ծառայություններ և բուժում ստանալ մասնագիտացված բժշկական հաստատություններում:
- Այն անձինք, ովքեր տուժել են արտակարգ իրավիճակներից, ունեն պետական երաշխավորված անվճար բժշկական օգնությունից և ծառայություններից օգտվելու իրավունք:

Իրականացվող մի շարք ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին պարբերաբար տրամադրվում են հետևյալ ծառայությունները՝

- հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովումը,
- հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովումը,
- սոցիալապես խոցելի անձանց տրամադրվող բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայությունները,
- հայաստանի Կույրերի Միավորման համար բրայլյան գրքերի, տետրերի տպագրության և տրամադրման, «Խոսող գրքերի» ձայնագրության ու տեղեկագրերի պատրաստման ծառայությունները,
- հաշմանդամ երիտասարդների ու պատանիների (հիմնականում մտավոր խնդիրներ ունեցող) և նրանց ընտանիքների սոցիալական, կրթական և առողջապահական հիմնախնդիրների լուծման հարցում աջակցությունը:

3.2.2 Համավճարի համակարգը

2004 թվականից սկսած՝ ՀՀ Կառավարությունը ներդրել է *համավճարային սկզբունքով փոխհատուցման համակարգը*: ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի թիվ 229-Ս հրամանով սահմանվում են այն հիվանդությունները և վիճակները, որոնց դեպքում բնակչությանը տրամադրվող բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում են համավճարային սկզբունքով (Առողջապահության նախարարություն, 2013): Համավճարային սկզբունքի համաձայն՝ բժշկական ծառայությունների համար քաղաքացիների կրած ծախսերը մասնակիորեն փոխհատուցվում են պետության կողմից:

Համավճարը չի կիրառվում հետևյալ անձանց նկատմամբ՝

- Սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված մարդիկ,
- Մարդիկ, որոնք համարվում են սոցիալապես անապահով (ըստ ՀՀ առողջապահության նախարարության, քաղաքապետարանի և բժշկական հանձնաժողովի որոշման), այն դեպքերում, երբ մարդը անվճար բուժում է ստանում, սակայն պաշտոնապես ընդգրկված չէ սոցիալապես խոցելի որևէ խմբում,
- Թոշակառուները:

Որոշ կազմակերպություններ իրենց աշխատակիցներին տրամադրում են սոցիալական փաթեթներ, որոնք ներառում են նաև առողջության ապահովագրությունը: Գոյություն չունի որևէ հատուկ պետական ծրագիր՝ խոցելի և գործազուրկ խմբերի բժշկական ապահովագրությունն ապահովելու համար: Հայաստանում մասնավոր ապահովագրական ընկերություններից բժշկական ապահովագրություն ստանալու համար պահանջվում է ներկայացնել անձնագիրը և սոցիալական ապահովության քարտը:

Չկա հատուկ մշակված քաղաքականություն կամ ռազմավարություն վերադարձողների վերաինտեգրման համար, ուստի վերադարձողները, ինչպես ցանկացած այլ անձ, կարող են օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունից՝ օրենքով սահմանված կարգով:

Վերադարձողները հաճախ դասվում են որոշակի խոցելի խմբերի շարքին և օգտվում են օրենքով սահմանված որոշ արտոնություններից՝ հասարակության մեջ իրենց վերախնտեզրման ժամանակ:

3.2.3 Հիվանդանոցային բժշկական օգնությունը

Հիվանդանոցային բժշկական օգնության անվճար մատուցման դեպքերը կարգավորվում ու ներկայացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի թիվ 44, 720-Ա հրամաններով և տարբեր այլ հրամաններով ու օրենքներով:

Վերընշվածին համաձայն՝ ամբողջ բնակչության համար հետևյալ հիվանդությունների բուժումը և բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում են անվճար՝

- աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը,
- սեռական ճանապարհով փոխանցվող վարակների բուժումը,
- հոգեբուժական օգնությունը,
- անհետաձգելի բժշկական օգնությունը, եթե կա ինտենսիվ թերապիայի անհրաժեշտություն,
- կախվածության բուժումը,
- հեմոդիալիզի անցկացման ծառայությունները,
- մանկաբարձական և գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնությունը,
- ինտենսիվ թերապիան,
- խոցելի և հատուկ խմբերի համար բժշկական օգնությունն ու սպասարկումը,
- բժշկասոցիալական վերականգնումը և աշխատունակության փորձաքննությունը,
- վերարտադրողական առողջության վերականգնման համար բժշկական օգնությունը,
- նախագորակոչային և գորակոչային տարիքի հասած անձանց բժշկական քննությունն ու բուժումը:

3.2.4 Դեղորայքի տրամադրումը

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից **անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղեր** ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշմամբ և ներկայացված է ստորև՝

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները. (հաշմանդամության խումբը (կարգը)) սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո գործում է բժշկասոցիալական

փորձաքննական հանձնաժողով, որը բժշկական հետազոտություն է իրականացնում և սահմանում է հաշմանդամության խումբը:

- Հաշմանդամ երեխաները (մինչև 18 տարեկան),
- հայրենական պատերազմի վետերաններ և նրանց հավասարեցված անձինք,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաները (մինչև 18 տարեկան),
- բազմազավակ (մինչև 18 տարեկան, չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաները,
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ,
- հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները (մինչև 18 տարեկան),
- մինչև 7 տարեկան երեխաները:

Բնակչության սոցիալական խմբերը, որոնց պատկանող անձանց հիվանդության դեպքում դեղերը տրվում են 50 տոկոս զեղչով`

- 3-րդ խմբի հաշմանդամները,
- Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքների մասնակիցները,
- բռնադատվածները,
- միայնակ չաշխատող կենսաթոշակառուները,
- միայն չաշխատող կենսաթոշակառուներից բաղկացած (այդ թվում` իրենց խնամքի տակ անչափահաս երեխա ունեցող) ընտանիքները,
- միայնակ մայրերի երեխաները (մինչև 18 տարեկան):

Չաշխատող կենսաթոշակառուներին դեղերը տրվում են 30 տոկոս զեղչով:

Այն հիվանդությունների ցանկը, որի առկայության դեպքում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով դեղերը հիվանդներին տրվում են անվճար`

- տուբերկուլյոզ (հակատուբերկուլյոզային դեղեր),
- հոգեկան հիվանդություններ (հոգեմետ դեղեր),
- չարորակ նորագոյացություններ (հակաուռուցքային դեղեր, ցավազրկող դեղեր, թմրադեղեր),
- շաքարային և ոչ շաքարային դիաբետ (հակադիաբետիկ դեղեր),
- էպիլեպսիա (հակացնցումային դեղեր),
- սրտամկանի ինֆարկտ (դուրսգրման օրվանից առաջին 2 ամիսը` արյան կորոնար շրջանառությունը բարելավող դեղեր),
- պարբերական հիվանդություն (կոլիսիցին և (կամ) համարժեք այլ դեղեր),

- սրտի փականների արատներ (հակակոագուլյանտներ՝ պրոթեզավորումից հետո),
- մալարիա (հակամալարիային դեղեր),
- քրոնիկ երիկամային անբավարարություն (երիկամային փոխպատվաստման և (կամ) ծրագրային հեմոդիալիզի դեպքերում (ցիկլոսպորին, էրիթրոպոետին, մոֆետիլի միկոֆենոլատ և (կամ) դրանց համարժեք այլ դեղեր),
- ֆենիլկետոնուրիա (ֆենիլալանին չպարունակող մանկական կեր):

Հայրենիք վերադարձած անձը, *զեղչով կամ արտոնյալ պայմաններով դեղ* ստանալու համար, պետք է դիմի իր տարածքային պոլիկլինիկա և ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ (Հայաստանի Հանրապետության անձնագիր կամ ինքնությունը և հայկական քաղաքացիությունը հաստատող ցանկացած այլ փաստաթուղթ) (երեխաների դեպքում ծննդյան վկայականը), ինչպես նաև սոցիալապես խոցելի այս կամ այն խմբին պատկանելու և զեղչով կամ արտոնյալ պայմաններով դեղ ստանալու իրավունք ունենալու փաստը հաստատող փաստաթղթերը: Վերադարձած անձը, դեղ ստանալու համար, պետք է դեղատանը ցույց տա իր համար դուրս գրված դեղատոմսը և ինքնությունը հաստատող վավերական փաստաթուղթ: Բոլոր այլ նման հարցերի համար խնդրում ենք դիմել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Վերադարձած անձինք սովորաբար ունեն այնպիսի **դեղորայքի** կարիք, որը պետք է **ներկրվի այլ երկրներից**: Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» թիվ 581 որոշման համաձայն՝ Հայաստան ժամանող ֆիզիկական անձն իրավունք ունի անձնական օգտագործման համար ներմուծելու 10-ական անվանում դեղ, յուրաքանչյուրից երեքական սպառողական փաթեթ, եթե փաստաթղթերով հիմնավորված չէ բուժման կուրսի համար անհրաժեշտ ավելի մեծ քանակը:

Հետևաբար, վերադարձած անձը պետք է ունենա գրանցման հավաստագիր, որ նշված դեղն առկա չէ և գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն) և արտասահմանյան բժշկի կողմից տրված մեկ այլ հավաստագիր (էպիկրիզ), որ նշված դեղերն անհրաժեշտ են իր բուժման համար և պետք է դրանք ներկայացնի սահմանին գործող Մաքսային տեսչությանը:

3.3 Կրթությունը

3.3.1 Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որն իրականացնում է կրթության և գիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Նախարարության լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ կրթության բնագավառը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:



Հայաստանի կրթության համակարգը ներառում է կրթության բոլոր մակարդակները՝ նախադպրոցականից մինչև հետբուհական: Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական ծրագրերն են՝

- հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ),
- մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը:

Հանրակրթական հիմնական ծրագրերն են՝

- նախադպրոցական.
- տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ),
- հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ),
- միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ):

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:

Մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

- նախնական մասնագիտական (արհեստագործական),
- միջին մասնագիտական,
- բարձրագույն մասնագիտական,
- հետբուհական մասնագիտական:

Լրացուցիչ կրթական ծրագրերը (հանրակրթական և մասնագիտական) նպատակաուղղված են հիմնական ծրագրերից դուրս սովորողների ու մասնագետների կրթական պահանջմունքների բավարարմանը և նրանց որակավորման բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետությունում գործող ուսումնական հաստատությունների տիպերն են՝

- նախադպրոցական,
- հանրակրթական,
- նախնական մասնագիտական (արհեստագործական),
- միջին մասնագիտական,
- բարձրագույն մասնագիտական,
- լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության,
- հետբուհական մասնագիտական կրթության:

«Կրթության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ կրթական ծրագրեր կարող են իրականացվել նաև ոչ ուսումնական հաստատություններում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի թույլտվությամբ:

3.3.2 Որակավորումների ճանաչումը և գնահատումը

Վերադարձող այն անձանց հետագա վերախնտեզրման նպատակով, որոնք նոր որակավորումներ են ստացել արտերկրում և Հայաստանում կրթությունը շարունակելու կամ աշխատանք գտնելու ցանկություն են հայտնել, ՀՀ Կառավարությունը ներմուծել է դիպլոմների/վկայագրերի ճանաչման համակարգը: Ծանաչման տեղեկանք տրվում է «Օտարերկրյա վկայագրերի և դիպլոմների ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում» ակտի հիման վրա: Այդ ակտի համաձայն՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը ճանաչում և հավաստում է օտարերկրյա ուսումնական հաստատությունների կողմից տրված կրթական վկայագրերի, շնորհված ակադեմիական տիտղոսների և ակադեմիական կոչումների համարժեքությունը և տրամադրում է համարժեքությունը հավաստող տեղեկանք:

Որակավորումների ճանաչումը և գնահատումն իրականացվում են Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի կողմից (ԱՓՇԱՏԿ):

ԱՓՇԱՏԿ-ը տրամադրում է՝

- տեղեկատվություն, խորհրդատվություն կամ պաշտոնական որոշումներ որակավորումների ճանաչման և գնահատման վերաբերյալ,
- համապատասխան, վստահելի և ճշգրիտ տեղեկատվություն որակավորումների, կրթական համակարգերի, ինչպես նաև ճանաչում

իրականացնող կազմակերպությունների, պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի վերաբերյալ,

- խորհրդատվություն, որակավորումների ճանաչման վերաբերյալ վերջնական որոշումներ՝ գոյություն ունեցող չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն իրականացված գնահատման հիման վրա,
- տեղեկատվություն ճանաչման հարցում նրանց իրավունքների վերաբերյալ,
- ճշգրիտ տեղեկատվություն ազգային մակարդակով բարձրագույն կրթության վկայագրերի և որակավորումների ճանաչման վերաբերյալ:

3.3.3 Լեզվի դասընթացները

Հայերենի համապատասխան իմացությունը հասարակությունում միգրանտների վերախնտեգրման կարևոր նախապայմաններից մեկն է: Հայերենին տիրապետելու շնորհիվ նրանք կկարողանան ընդունվել ուսումնական հաստատություններ և քոլեջներ: Միգրանտների հետ աշխատող կազմակերպությունների մեծ մասը կարող է աշխատանքի ընդունել ուսուցիչների և կազմակերպել հայերենի դասընթացներ, եթե վերադարձած անձանց համար առկա է նման անհրաժեշտություն: Հետևաբար, նման դասընթացների կազմակերպումը հիմնականում պայմանավորված է պահանջարկով:

Գոյություն ունեն մի շարք կազմակերպություններ, ՀԿ-ներ և կրթական հաստատություններ, որոնք կազմակերպում են հայերենի դասընթացներ: ՀԿ-ների շարքում «Հույս և օգնություն» ՀԿ-ն պարբերաբար կազմակերպում է հայերենի և ռուսերենի մասնագիտացված դասընթացներ միգրանտների երեխաների համար: Երևանի թիվ 114 դպրոցը նույնպես պատկանում է այն կրթական հաստատություններին, որոնք առաջարկում են հայերենի դասընթացներ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները նույնպես ունեն լեզվի բաժիններ (հիմնականում օտարերկրյա ուսանողների համար): Երևանի պետական համալսարանը, ինչպես նաև այլ ուսումնական հաստատություններ ունեն հատուկ ֆակուլտետներ, որտեղ վերապատրաստվում են օտարերկրյա ուսանողները: ՀՀ քաղաքացիները նույնպես կարող են մասնակցել այդ դասընթացներին իրենց լեզվական հմտությունները բարելավելու նպատակով:

Այս ֆակուլտետ դիմող ուսանողները բաժանվում են երեք խմբի՝

- Ուսանողներ, որոնք ընդհանրապես չեն տիրապետում հայերենին,
- Ուսանողներ, որոնք ունեն հայերենի բազային գիտելիքներ,
- Ուսանողներ, որոնք գերազանց տիրապետում են հայերենին:

Մեկ ուսումնական տարվա ընթացքում ուսանողները ձեռք են բերում բավարար գիտելիքներ՝ իրենց մասնագիտական ուսուցումը հայերենով շարունակելու համար: ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը, ըստ պահանջի, կարող է տեղեկատվություն տրամադրել հայերենի առկա դասընթացների վերաբերյալ կամ, անհրաժեշտության դեպքում, օգնել հատուկ խմբերի համար այդպիսի դասընթացներ կազմակերպելու հարցում:¹²

12 Միաժամանակ ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում՝ www.edu.am «Հետադարձ կապի»՝ «Հաճախ տրվող հարցեր» բաժնում տեղադրվում է կրթության համակարգի վերաբերյալ քաղաքացիներին հետաքրքրող հարցերը:

3.4 Չինվորական ծառայությունը

Հայաստանում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի ներկայացուցիչներն անցնում են երկու տարի ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն: Պատասխանատու մարմինը Հայաստանի պաշտպանության նախարարությունն է: Վերադարձող այն անձանց նկատմամբ, որոնք չեն անցել պարտադիր զինվորական ծառայություն, կիրառվում է «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՀ օրենքը:



Այն միզրանտները, որոնք չեն անցել պարտադիր զինվորական ծառայություն և մտադիր են վերադառնալ Հայաստան, պետք է հյուրընկալող երկրում գտնվող Հայաստանի Հանրապետության դեսպանատան հյուպատոսական բաժնի կամ հյուպատոսական ծառայության միջոցով դիմում ներկայացնեն զինվորական կոմիսարիատ՝ Հայաստան վերադառնալիս սահմանապահների կողմից չձերբակալվելու համար: Դիմում կարելի է ներկայացնել նաև լիազորված ներկայացուցչի միջոցով՝ տրամադրելով լիազորագիր, ինչը նշանակում է, որ դիմումը ՀՀ Պաշտպանության նախարարություն կարող է ներկայացվել անձի ազգականի կողմից: Դիմումը ներկայացնելուց մի քանի օր հետո վերադարձող անձը հանվում է սահմանապահների մոտ գտնվող ցուցակից՝ երկիր մուտք գործելիս խնդիրներից խուսափելու նպատակով:

27 տարեկան, ինչպես նաև 27 տարեկանը չլրացած ՀՀ այն քաղաքացիները, որոնք չեն անցել պարտադիր զինվորական ծառայություն, պետք է մուծեն վճարներ՝ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն: 28 տարեկան և ավելի մեծ տարիքի այն ՀՀ քաղաքացիները, որոնք չեն անցել պարտադիր զինվորական ծառայություն, մույնպես մուծում են վճարներ՝ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, և հաշվառվում են պահեստագործում:¹³

Վերադարձող այն անձինք, որոնց զինվորական ծառայության վերաբերյալ անհրաժեշտ է խորհրդատվություն, պետք է դիմեն իրավաբանի օգնության կամ կապվեն մասնագիտացված ՀԿ-ների հետ, ինչպես օրինակ՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի կամ «Չինվորի մայր» ՀԿ-ի հետ:

Հայաստանի Հանրապետության Չինված ուժերի համակարգը երկրի ամենախոշոր գործատունն է, և վերադարձող անձանց համար այնտեղ առկա են աշխատանք գտնելու հնարավորություններ: Դիմումներն ընդունվում են զինվորական կոմիսարիատների կողմից: Թափուր ղեկավար պաշտոնները համալրվում են մրցույթների միջոցով: Թափուր պաշտոնների մասին հայտարարությունները տեղադրվում են համացանցում:

¹³ Աղբյուր՝ «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի Հայաստանի Հանրապետության օրենք (ոչ պաշտոնական քարզմանություն)

Դպրոցական բարձր տարիքի (18-27 տարեկան) արական և իգական սեռի վերադարձող անձինք կարող են նաև կրթություն ստանալու նպատակով դիմել ռազմական կրթական հաստատություններից որևէ մեկը:

3.5 Բանկային ծառայությունները

Բանկային համակարգը Հայաստանի ֆինանսական շուկայի ամենամեծ ոլորտն է: 2015թ. սեպտեմբերի 33- ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունում կար 21 գործող առևտրային բանկ: Դրանք ունեն 535 մասնաճյուղ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, որից 235-ը գտնվում են Երևանում:

3.5.1 Կենտրոնական բանկ

Ֆինանսական ոլորտի բոլոր աշխատանքները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից: Համապատասխան օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետք է ապահովի հանրապետությունում գների կայունությունը: Իր հիմնական խնդիրն իրագործելու համար Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականություն, որի միջոցով կարգավորվում է դրամաշրջանառությունը և տնտեսության վարկավորումը:

Կենտրոնական բանկի խնդիրներն են՝

- Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, վճարունակության, իրացվելիության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումը,
- Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը և դրամաշրջանառության կազմակերպումն ու կարգավորումը:

Կենտրոնական բանկի գործունեությունն ուղղված է ֆինանսական կայունության ապահովմանը և վճարահաշվարկային համակարգի, ազգային արժույթի, Հայաստանի ֆինանսական ոլորտին վերաբերող իրավական ակտերի և վիճակագրության վերահսկմանը: Կենտրոնական բանկը նաև իրականացնում է սպառողների իրավունքների պաշտպանություն և վերահսկում է կրթական ծրագրերը:

3.5.2 Առևտրային բանկերը

20134 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ Հայաստանում գործում էր 21 առևտրային բանկ: 2014 թվականի դեկտեմբերի վերջին Հայաստանում գործող առևտրային բանկերի համախառն ակտիվները կազմել են շուրջ 3,548.8 միլիարդ ՀՀ դրամ:¹⁴



14 www.armbanks.am/hy/2016/02/16/95337/

2015թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ առաջատար (ըստ վարկերի) հինգ բանկերի բաժինը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 53.3%-ը:

Վարկերի ընդհանուր գումարի մեծ մասը (95.7%) տրամադրվել է ռեզիդենտներին, որից 56.9%-ը տրամադրվել է ընկերություններին (այս գումարի միայն 1.2%-ը տրամադրվել է պետական ընկերություններին), 39%-ը՝ տնային տնտեսություններին, և միայն փոքր մասն է տրամադրվել շահույթ չհետապնդող ընկերություններին ու այլ ֆինանսական կառույցներին: Նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատությամբ վարկերի ընդհանուր ծավալում տնային տնտեսություններին տրամադրված վարկի բաժինը նվազել է 0.7 տոկոսային կետով, սակայն ընկերությունների բաժինը աճել է 1.2 տոկոսային կետով:¹⁵

Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրության համաձայն՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Հայաստանի բանկային ոլորտում առաջատար տասը բանկերն են «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ, «Ամերիաբանկ» ՓԲԸ, «Ամեյիք Բանկ» ՓԲԸ, «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ, «Արարատբանկ» ԲԲԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ, «Արմավիսբանկ» ՓԲԸ, «Արցախբանկ» ՓԲԸ, «Բիրլուս Բանկ Արմենիա» ՓԲԸ, «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ:

Բոլոր բանկերն իրենց ժամկետներով և պայմաններով տրամադրում են քիզնես վարկեր:

Բանկային հաշիվ բացելու համար պահանջվում է անձնագիր և սոցիալական քարտ: Եթե վերադարձող անձը դեռևս չունի վավերական անձնագիր, ապա նա կարող է ներկայացնել այն վավերական անձնագիրը, որն ունեցել է արտերկրում ապրելու ժամանակ: Բանկային հաշիվ բացելը տևում է մոտավորապես երկու օր՝ ելնելով տվյալ բանկից: Վճարային քարտ ստանալը տևում է մոտավորապես մեկ շաբաթ՝ ելնելով տվյալ բանկից:

3.5.3 Դրամական փոխանցումները և միզրանտների խնայողությունները

Հայաստանում գործում են դրամական փոխանցումների բազմաթիվ համակարգեր: Տարբեր բանկեր կիրառում են դրամական փոխանցումների տասներեք տարբեր համակարգեր՝ «IntelExpress», «MoneyGram», «RIA Money Transfer», «Golden Money transfer», «Unistrim», «XpressMoney», «AVERS», «Anelik», «BIF-SOUZ», «Bistraya Pochta», «Faster», «SWIFT», «Coinstar Pro Pay», առավել մանրամասն տեղեկությունների համար, խնդրում ենք հետևել հղմանը՝ www.banks.am/am/transfers: Դրանք բոլորն էլ գործում են Հայաստանի Հանրապետության տարածքում, և դրանց բոլորի համար սահմանված են դրամական փոխանցումների ծառայությունների տարբեր սակագներ և վճարման տարբեր պայմաններ՝ թե՛ ուղարկողների և թե՛ ստացողների համար: Որոշ դեպքերում սպասարկման վճարը կատարում է գումարն ուղարկողը, իսկ որոշ դեպքերում սպասարկման վճարը գանձվում է ստացողից: Յուրաքանչյուր անձ կարող է ընտրել իր համար ամենահարմար տարբերակը:

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն (ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին)՝ ֆիզիկական անձանցից ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները ենթակա չեն հարկման: Միզրանտների ընդհանուր խնայողությունները, անկախ այն

15 www.kpmg.com/AM/en/IssuesAndInsights/ArticlesPublications/Pages/ArmenianBankingSectorOverviewforthe3QuartersResultsOf2015.aspx

հանգամանքից, թե դրանք պահվում են հյուրընկալող երկրում, թե կուտակվում են Հայաստանում, կարող են զգալի գումար կազմել: Եթե գումարը պահվում է այնպիսի բանկում, որը ներկայացուցչություն ունի Հայաստանում, կամ տվյալ անձն օգտագործում է միջազգային այնպիսի կրեդիտ քարտեր, ինչպիսիք «Master Card», «Visa Card», «American express» քարտերն են, ապա նա հեշտությամբ կարող է ստանալ իր խնայողությունները վերադառնալուց հետո: Եթե խնայողությունները պահվում են այնպիսի բանկի հաշվի վրա, որը Հայաստանի բանկային համակարգում չունի ներկայացուցչություն, ապա գումարն ստանալու ընթացակարգը բավականին բարդանում է, և կպահանջվի լիազորված ներկայացուցիչ, որը կիրականացնի դրամական փոխանցումը: Խնայողությունները ենթակա չեն հարկման: Գանձվում է միայն սպասարկման վճարը:

3.6 Սոցիալական պաշտպանությունը

Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգը կարգավորվում է **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից**: Հայաստանում ամենակարևոր պետական սոցիալական աջակցության տեսակներն են՝

- ընտանեկան նպաստը,
- մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը,
- երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
- նախածննդյան և հետծննդյան 140 օր տևողությամբ վճարովի արձակուրդի իրավունք:

Սոցիալական աջակցությունը ստանալու իրավունք ունեն հետևյալ անձինք՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,
- կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները,
- քաղաքացիություն չունեցող անձինք,
- փախստականները:

3.6.1 Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները տրամադրվում են անապահով ընտանիքներին կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելու կամ դրա վատթարացումը կանխելու նպատակով: Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներն են՝ ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը:

1994 թվականին Հայաստանում ներմուծվել է «Փարոս» համակարգը՝ ընտանիքների անապահովության գնահատման համար: Այս համակարգով որոշվում է հաշվառված ընտանիքների՝ նպաստներ ստանալու իրավունքը տարբեր չափման միավորներ ունեցող այնպիսի բնութագրիչների հիման վրա, ինչպիսիք ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական վիճակը, ընտանիքի անդամների թիվը, անաշխատունակությունը, բնակության վայրը և կենսապայմանները, ինչպես նաև ընտանիքի ամսական միջին եկամուտն են, և այդ տվյալները գրանցվում են տեղեկատվական բազայում: 1996

թվականին Հայաստանում ընտանիքների մոտավորապես 70 տոկոսը հաշվառված էր «Փարոս» համակարգում: Ընտանեկան նպաստ ստանալու համար վերադարձողները պետք է դիմեն փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային կենտրոններ, որից հետո նրանք կհաշվառվեն «Փարոս» համակարգում: Ընտանիքները պետք է տրամադրեն իրենց տնային տնտեսությունների վերաբերյալ տվյալներ պարունակող օժանդակ փաստաթղթեր: Ընտանեկան նպաստի բազային մասը 17 հազար դրամ է, իսկ ընտանեկան նպաստի չափը որոշելը և չափի տարբերակման պայմանները սահմանված են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով:

Բոլոր նորածին երեխաների համար **մեկ անգամ տրամադրվում է միանվագ նպաստ**, որի չափը սահմանվել է 50 հազար դրամ՝ առաջին և երկրորդ երեխայի համար և 430 հազար դրամ՝ երրորդ երեխայի և հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար: Դիմումները ներկայացվում են սոցիալական նպաստների հարցերով տարածքային կենտրոնների միջոցով: Դա նպաստ է, որը տրամադրվում է երեխայի խնամքի համար հղիության և ծննդաբերության երկարաժամկետ արձակուրդում գտնվող աշխատող մայրերին (կամ հայրերին): Ֆինանսական օժանդակությունը կազմում է ամսական 18 հազար դրամ և վճարվում է մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը: Դիմումները ներկայացվում են սոցիալական նպաստների հարցերով տարածքային կենտրոնների միջոցով:

Կանայք ունեն **նախածննդյան և հետծննդյան 140 օր տևողությամբ վճարովի արձակուրդի իրավունք** (70 օր՝ նախածննդյան և 70 օր՝ հետծննդյան (ավելի երկար՝ բարդ ծննդաբերությունների կամ գույգ և ավելի երեխա ունենալու դեպքում): Հիմնվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածի վրա՝ նպաստի չափը հավասար է միջին եկամտի 100 տոկոսին (անկախ զբաղված լինելու տարիների թվից)՝ բաժանած 30.4-ի (ամսվա մեջ օրերի միջին թիվը) և բազմապատկած հղիության ու ծննդաբերության արձակուրդի օրերի թվով: Հղիության և ծննդաբերության արձակուրդը տրամադրվում է միայն աշխատանքային պայմանագիր ունեցող կանանց և, հետևաբար, Հայաստանում առանց աշխատանքային պայմանագրի աշխատող մայրերի կամ տնային տնտեսուհիների ավելի մեծ տոկոսը չի ստանում հղիության և ծննդաբերության որևէ նպաստ: Դիմումները ներկայացվում են սոցիալական նպաստների հարցերով տարածքային կենտրոնների միջոցով:

3.6.2 Կենսաթոշակները

Կենսաթոշակների և սոցիալական ապահովության համար պատասխանատու պետական մարմինը **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն** է (ԱՍՀՆ): Նախարարությունը պատասխանատու է աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտներում (բացառությամբ առողջապահության ոլորտի) քաղաքականության բոլոր ուղղություններն իրականացնելու համար: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության



համակարգում գործող Սոցիալական ապահովության ծառայությունն այն մարմինն է, որը ծառայություններ է մատուցում սոցիալական ապահովության ոլորտում: Կենսաթոշակների հետ կապված հարցերը կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՀ օրենքով: Հայաստանում հիմնական կենսաթոշակը կազմում է 13000 դրամ:

Ծերության սոցիալական կենսաթոշակ նշանակվում է 65 տարին լրացած այն անձանց, որոնք ունեն առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ: Կանանց համար գործում է տարիքային սանդղակ, որի համաձայն, մինչև 63 տարին լրանալը, նրանց դեպքում ամեն տարի այդ տարիքն ավելանում է 6 ամսով: 2007 թվականին կանանց կենսաթոշակ նշանակվում էր 61 տարեկան հասակում, իսկ 2011 թվականին՝ 63 տարեկան հասակում և այլն: Ծերության սոցիալական կենսաթոշակ նշանակվում է 65 տարին լրացած այն անձանց, որոնք չունեն առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

Նախկին **բաշխիչ կենսաթոշակային համակարգի** փոխարեն 2014 թվականի հունվարից 40 տարին չլրացած բոլոր քաղաքացիների համար մեկնարկել և ներմուծվել է «կուտակային կենսաթոշակային համակարգը»՝ պարտադիր ու կամավոր բաղադրիչներով: Այս կուտակային կենսաթոշակային ծրագրով ենթադրվում է, որ 2014 թվականի հունվարից 40 տարին չլրացած բոլոր աշխատող քաղաքացիները պետք է կուտակեն իրենց կենսաթոշակները՝ իրենց ամսական աշխատավարձի 5 տոկոսը փոխանցելով համապատասխան խնայողությունների հաշվին: Կուտակված գումարն այնուհետև կրկնապատկվելու է կառավարության կողմից: 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ 40 տարեկանից բարձր անձանց համար այս համակարգը կամավոր է: Պետությունը չի մասնակցելու կենսաթոշակային ֆոնդերի կառավարմանը: 2014 թվականի դրությամբ՝ կենսաթոշակային ֆոնդերը կառավարվում են մասնավոր (գործարար) ֆոնդերի կողմից:¹⁶ Քաղաքացիները կարող են օգտվել իրենց կուտակումներից՝ պաշտոնական կենսաթոշակային տարիքին հասնելուց հետո:

Հայաստանում **կենսաթոշակային տարիքը** 63 տարեկանն է, իսկ սոցիալական կենսաթոշակի համար՝ 65 տարեկանն է (ավելի ցածր այն անձանց համար, որոնք աշխատել են առանձնապես ծանր կամ վնասակար պայմաններում):

Նոր համակարգով սահմանվում են կենսաթոշակների երեք կատեգորիաներ՝

Աշխատանքային կենսաթոշակ՝

- տարիքային,
- արտոնյալ պայմաններով,
- երկարամյա ծառայության,
- հաշմանդամության,
- կերակրողին կորցնելու դեպքում,
- մասնակի:

Զինվորական կենսաթոշակ՝

- երկարամյա ծառայության,

16 Հավելյալ տեղեկությունները հասանելի են Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոնի կայքէջում՝ www.epension.am

- հաշմանդամության,
- կերակրողին կորցնելու դեպքում:

Սոցիալական կենսաթոշակ՝

- տարիքային,
- հաշմանդամության,
- կերակրողին կորցնելու դեպքում:

Հայաստանում կենսաթոշակ ստանալու համար վերադարձած անձինք պետք է համապատասխանեն օրենքով սահմանված պահանջներին և պետք է ունենան բնակության գրանցված վայր, այսինքն՝ հասցե Հայաստանի Հանրապետությունում: Պետական կենսաթոշակները ներկայումս նշանակվում և տրամադրվում են Հայաստանի տարածքում գործող 51 կենսաթոշակային գրասենյակների կողմից: Կենսաթոշակների համար դիմումներն ընդունվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից:

Հայաստանի այն քաղաքացիների համար, որոնց մշտական բնակության վայրը եղել է արտասահմանում, գործում է «Կենսաթոշակային ապահովության բնագավառում քաղաքացիական իրավունքների երաշխիքների մասին» բազմակողմ համաձայնագիրը, որը ստորագրվել է 1992 թվականի մարտի 13-ին՝ Անկախ պետությունների համագործակցության 12 անդամների կողմից, որով կարգավորվում է ԱՊՀ երկրներում կենսաթոշակային ապահովությունը: Այս համաձայնագրով ԱՊՀ քաղաքացիներին իրավունք է վերապահվում կենսաթոշակի անցնելուց հետո ստանալու իրենց կենսաթոշակը իրենց բնակության վայրում, եթե իրենց նախկին մշտական բնակության վայրի երկրում իրենց կենսաթոշակների վճարումը դադարեցվել է: Այս համաձայնագրի հիման վրա՝ հիմնադրվել է **Կենսաթոշակների և սոցիալական ֆոնդերի միջազգային ասոցիացիան**՝ ԱՊՀ երկրների, Վրաստանի և Բալթյան երկրների մասնակցությամբ:¹⁷ Ասոցիացիայի նպատակը սոցիալական ապահովությունը պաշտպանելը, խթանելը և զարգացնելը, ինչպես նաև սոցիալական և կենսաթոշակային ֆոնդերի գործունեությունը համակարգելն է:

3.7 Իրավաբանական օգնությունը և անձնական տվյալների պաշտպանությունը

3.7.1 Իրավաբանական օգնությունը

Որոշ դեպքերում Հայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է իրավաբանական օգնության տրամադրում այն անձանց, որոնք հնարավորություն չունեն իրավաբան վարձելու: Առանձին դեպքերում, անվճար իրավաբանական օգնություն կարող է տրամադրվել նաև այն անձանց, որոնք դեռևս պաշտոնապես չեն ներգրավվել որպես կասկածյալ կամ մեղադրյալ, սակայն բավարար հիմքեր կան կարծելու, որ համապատասխան մարմինը պատրաստվում է մեղադրանք ներկայացնել նրանց դեմ: Համաձայն Փաստաբանության մասին ՀՀ օրենքի անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից **Հանրային պաշտպանի գրասենյակի** միջոցով՝ պետական բյուջեի հաշվին:

¹⁷ Լրացուցիչ տեղեկությունների համար, տե՛ս www.apsf.ru:

Հանրային պաշտպանի գրասենյակն ունի 27 լրիվ աշխատաժամանակով և 2 ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատող հանրային պաշտպան Երևանում ու 38 հանրային պաշտպան՝ Հայաստանի մարզերում:

Հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում նաև հետևյալ անձանց՝



- 1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին,
- 2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին,
- 3) դատապարտյալներին,
- 4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին,
- 5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին,
- 6) գործազուրկներին,
- 7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին,
- 8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց,
- 9) փախստականներին,
- 10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներին,
- 11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց,
- 12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց,
- 13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց:

Անհատները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ սահմանադրությամբ ու օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով և նորմերով երաշխավորված մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման

դեպքերի վերաբերյալ իրենց բողոքները կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն ունի կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, փախստականների, զինժառանգողների, փոքրամասնությունների և այլ հարցերով զբաղվող բաժիններ:

Աշխատողների աշխատանքային իրավունքները և շահերը ներկայացնելն ու պաշտպանությունը կարող է իրականացվել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից:

3.7.2 Անձնական տվյալների պաշտպանությունը

Վերադարձողների, հատկապես խոցելի խմբերի (օրինակ՝ թրաֆիքինգի զոհերի) սոցիալական վերախնտեզրումը մեծապես կախված է նրանց՝ անձնական կյանքի գաղտնիության և անհատական տվյալների պաշտպանության իրավունքը հարգելու հանգամանքից: Հետևաբար, վերադարձողին մեկ հաստատությունից մեկ այլ հաստատություն ուղղորդելու գործընթացում շատ կարևոր է պատշաճ կերպով ապահովել նրանց անձնական տվյալների պաշտպանությունը և համագործակցության ընթացքում հարգել գաղտնիության և անհատական տվյալների պաշտպանության իրավունքը: Գաղտնիության ապահովման խնդիրները կապված են տեղեկատվական տեխնոլոգիաների արագ աճի և այն փաստի հետ, որ տվյալները թվային եղանակով հեշտ փոխանցելի և մատչելի են, և դրանց անզգույշ բացահայտումը կարող է վնասել կամ սպառնալ խոցելի մարդկանց, ռիսկի խմբի պատկանող երիտասարդների, հաշմանդամների, թրաֆիքինգի զոհերի և այլոց անվտանգությանը:

Հայաստանի կառավարությունը վավերացրել է Անձնական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: 2015 թվականի մայիսի 18-ին ընդունվել է Անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենքը, որը կարգավորում է պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները: Հայաստանի Հանրապետության կառավարության

2 հուլիսի 2015 թվականի N 734-Ն որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը և հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը:

Բաժին II

Ուղղորդման համակարգը և վերախնտեգրման ինստիտուցիոնալ շրջանակը

Գլուխ 4. Միգրանտների ուղղորդման կենտրոնները

Հնարավոր և վերադարձող միգրանտները կարող են աջակցություն գտնել Միգրացիայի 7 ռեսուրս կենտրոններից (ՄՌ-Կ) մեկում, որոնք գործում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ջբաղվածության պետական գործակալությունում: ՄՌ-Կ-ն ունի երկու թիրախային խումբ՝ հնարավոր աշխատող միգրանտներ և Հայաստան վերադարձած միգրանտներ: ՄՌ-Կ-ները հնարավոր աշխատող միգրանտներին տրամադրում են տեղեկություններ հյուրընկալող երկրում վիզայի ստացման ընթացակարգերի, օրենսդրության և աշխատանքային հնարավորությունների մասին:

Միգրացիոն ռեսուրս կենտրոնը տեղեկացնում, կողմնորոշում և վերապատրաստում է աշխատող միգրանտներին՝ արտասահմանում աշխատելու և մնալու համար նախապատրաստվելու և հայրենիք վերադառնալիս նրանց վերախնտեզրման հարցում:

ՄՌ-Կ-ն տեղեկություններ է տրամադրում՝

- (i) նպատակակետ երկրի և նրանց միգրացիոն ու աշխատանքային օրենսդրության,
- (ii) արտասահման մեկնելու և այնտեղ բնակվելու համար անհրաժեշտ ընթացակարգերի և,
- (iii) օրինական միգրացիայի հնարավորությունների և անկանոն միգրացիայի վտանգների մասին:

Լինելով զբաղվածության կենտրոնների հեկազմում՝ ՄՌ-Կ-ները նաև տեղեկություններ են տրամադրում Հայաստանում և այն օտարերկրյա պետություններում թափուր աշխատատեղերի մասին, որոնց հետ Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ունի աշխատանքային հարաբերությունների պայմանավորվածություններ կամ երկկողմ/բազմակողմ աշխատանքային համաձայնագրեր:

Այն նաև տեղեկացնում է վերադարձողներին առկա վերախնտեզրման ծրագրերի մասին, նրանց ուղղորդում է դեպի պետական զբաղվածության ծրագրեր, իրականացնում է վերադարձած անձանց հմտությունների գնահատում և հրավիրում է գործատուներին ու աշխատանքի հավանական թեկնածուներին այսպես կոչված աշխատանքի ակումբներ:¹⁸ Երևանում միգրացիոն ռեսուրս կենտրոններից մեկը Լեհաստանում ապրող հայերի համար լրացուցիչ թեժ գիծ ունի, որի միջոցով խորհրդատվություն է տրամադրում փաստաթղթերի, վիզաների, բանկային և այլ հարցերի վերաբերյալ:

ՄՌ-Կ-ն Երևանում՝

Հասցեն՝ Երևան, Էրեբունի և Նուբարաշեն շրջան, Ջբաղվածության կենտրոն,
Հայաստանի Հանրապետություն, Երևան, Խորենացու փողոց 213ա
Հեռախոս՝ 374 10 57 46 80

ՄՌ-Կ-ն Աշտարակում՝

Հասցեն՝ Աշտարակ քաղաքի Ջբաղվածության կենտրոն, Հայաստանի
Հանրապետություն, Արագածոտնի մարզ, 0201 Աշտարակ, Ներսես

¹⁸ Աշխատանքի ակումբներն այնպիսի միջոցառումների անցկացման վայր են, որտեղ գործատուները ներկայացնում են իրենց ընկերությունները աշխատանք փնտրող խմբին:

Աշտարակեցի փողոց, 1-ին հարկ, 6,7,8-րդ սենյակներ
Հեռախոս՝ +374 232 35233, 35293

ՄՌԿ-ն Արտաշատում՝

Հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Արտաշատ, Իսակովի փողոց 47
Հեռ.՝ +374 93 97 00 69

ՄՌԿ-ն Իջևանում՝

Հասցեն՝ Իջևան քաղաքի Ջրաղվածության կենտրոն, Հայաստանի
Հանրապետություն, Տավուշի շրջան, Իջևան, Վասիլյան փողոց 2
Հեռախոս՝ +374 263 31567, 31139

ՄՌԿ-ն Արմավիրում՝

Հայաստանի Հանրապետություն, Արմավիր, Աբովյան փողոց 137, 2-րդ հարկ
Հեռախոս՝ +374 (0)94 96 00 39

ՄՌԿ-ն Վայքում՝

Հայաստանի Հանրապետություն, Վայք, Շահումյան փողոց 14
Հեռախոս՝ +374 (0)94 94 01 16

ՄՌԿ-ն Գորիսում՝

Հայաստանի Հանրապետություն, Գորիս, Մաշտոցի փողոց 3, 2-րդ հարկ
Հեռախոս՝ +374 (0)93 93 05 56



Աղբյուր՝ www.yerevan.am/edfiles/images/embassy/varchakan.arm.jpg

Միգրացիոն պետական ծառայության կառուցվածքում ստեղծվել է **վերաինտեգրման ուղղորդման կենտրոն (ՎՈԻԿ)**, ՄՊԾ-ում առաջին կոնտակտը, որը վերադարձած անձանց պաշտոնապես կուղղորդի առկա ծրագրերին:¹⁹ Կենտրոնացված համակարգը մշակվել է միգրանտներին միասնական կոնտակտային կետ ապահովելու համար, որը նրանց կգրանցի և կուղղորդի պետական ծառայություններին և զբաղվածության ծրագրերին, ինչպես պահանջվում է: ՎՈԻԿ գրասենյակը գտնվում է Միգրացիոն պետական ծառայության շենքում: Վերադարձած անձինք կգրանցվեն և կստանան ընդհանուր տեղեկություններ, կիրականացվի կարիքների և հմտությունների գնահատում, իսկ վերադարձած անձինք կներգավեն զբաղվածության ծրագրերում Ջբաղվածության պետական ծառայության գործակալության (ՋՊԾԳ) կողմից կամ միջազգային և տեղական կազմակերպությունների կամ ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերին: Ակնկալվում է նաև ՎՈԻԿ-ի միջոցով ստանալ ավելի շատ որակական տվյալներ վերադարձած անձանց վերաբերյալ և վերադարձ ենթադրող միգրացիայի վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Ներկայումս, միգրացիայի մասով առկա միակ վիճակագրությունը ուղևորների փոխադրման վերաբերյալ վիճակագրությունն է, այն է՝ Հայաստան ժամանող և Հայաստանից մեկնող ուղևորների թիվը: Տարբերությունը հաշվարկվում է որպես դրական կամ բացասական միգրացիա: Վերադարձած անձանցից անմիջապես ստացված տվյալները հետագայում թույլ կտան ունենալ ավելի իրատեսական պատկեր և հնարավորություն կտան իրականացնելու տեղեկությունների ավելի խորը վերլուծություն:

Միգրացիոն պետական ծառայության կառուցվածքում **վերաինտեգրման ուղղորդման կենտրոն**

Հասցեն՝ ՀՀ, 0033 Երևան, Հր. Քոչար 4
Հեռախոս՝ +374 (0)10 22 49 25
Էլ-հասցե՝ contact@ti-armenia.org
Կայքէջ՝ www.smsmta.am
Էլ-փոստ՝ externalrelations.sms@gmail.com
Աշխատանքային ժամեր՝ Ամեն օր 9:00-18:00
(ընդմիջման ժամեր՝ 13:00-14:00)

Միգրացիոն պետական ծառայությունը ստեղծել է Տունդարձ՝ www.tundarc.am, ինտերնետային տեղեկատվական համակարգը օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետություն վերադարձող քաղաքացիների (ինչպես նաև երկքաղաքացիների) համար: Այն մասնավորապես հնարավորություն է ընձեռում ինչպես օգտակար տեղեկատվություն քաղել վերադարձի և հայրենիքում վերաինտեգրման գործընթացների և այս ոլորտում իրականացվող ծրագրերի վերաբերյալ, այնպես էլ կոնկրետ հարցով կամ խնդրով կամ առաջարկությամբ ժամանակակից էլեկտրոնային կապուղիներով դիմել հայաստանյան պետական մարմիններին:

19 ՎՈԻԿ-ի գաղափարը «Շարժունակության շուրջ գործընկերության» գործընկերության շրջանակներում, ԵՄ թիրախային նախաձեռնության «Հայաստանի «Միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի կարողությունների հզորացում» կենտրոնանալով վերաինտեգրման ուղղված միջոցառումների վրա» ծրագրի նախաձեռնություն է, որն իրականացվել է Ներգաղթի և ինտեգրման ֆրանսիական գրասենյակի կողմից (Office Français pour l'Immigration et l'Intégration) Բելգիայի, Բուլղարիայի, Չեխիայի Հանրապետության, Ֆրանսիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Լեհաստանի և Ռումինիայի կառավարությունների, ինչպես նաև Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) հետ համագործակցությամբ:

Թիրախային Նախաձեռնություն Հայաստանի համար (ԹՆՀ) ծրագրի շրջանակներում ստեղծվել է Վերաինտեգրման համագործակցության և համակարգման ֆորում: Ֆորումը իրենից ներկայացնում է ոչ ֆորմալ համագործակցության հարթակ, որն իր գործունեությունը իրականացնում է կամավոր հիմունքներով և նպատակ ունի մեկտեղել միգրանտների խնդիրներով զբաղվող կազմակերպություններին՝ ոլորտում առկա խնդիրների և մարտահրավերների քննարկման և կուտակված փորձի փոխանակման նպատակով: Ֆորումի անդամ են հանդիսանում պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների ներկայացուցիչները: Ֆորումն իր գործունեությունն իրականացնում է պարբերական աշխատանքային հանդիպումների միջոցով, որոնք սովորաբար տեղի են ունենում եռամսյակը մեկ անգամ և ֆորումի գործունեությունն իրականացնում է ՀՀ Սիգրացիոն պետական ծառայությունը: Ֆորումի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.tundarc.am կայքը և հետևյալ ֆեյսբուքյան էջերը՝ www.facebook.com/TIAproject, www.facebook.com/groups/709642632473751/

Գլուխ 5. Վերաինտեգրման ծրագրերի ցանկը՝ ըստ իրականացնող կազմակերպությունների

Կազմակերպությունը	Գործունեության հիմնական ոլորտները	Կոնտակտային տվյալները
<p>Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)</p>	<p>Հայաստանի քիթախային մարզերը՝ բոլոր մարզերը Գործընկերները՝ ԵՄ անդամ պետությունների կառավարությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը Գ-ոնորները՝ տարբեր Թիրախային խումբը՝ Բելգիայից, Ֆինլանդիայից, Իտալիայից, Նորվեգիայից, Լեհաստանից, Սլովակիայից, Շվեյցարիայից և Նիդեռլանդներից Հայաստան կամավոր վերադարձող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները</p>	<p>ՄՄԿ Հայաստանի առաքելություն Հասցեն՝ Պ. Աղամյան 14, Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն Հեռախոսը՝ +374 10 585692, Fax: +374 10 543365 Կայքը՝ www.iom.int/assisted-voluntary-return-and-reintegration www.iom.int/countries/Armenia (English) Էլ. հասցեն՝ iomArmenia@iom.int</p>
<p>ՄՄԿ-ն տրամադրում է ծառայություններ՝ ապահովելու շահառուների կայուն վերաինտեգրումը; հնարավորություն տալու նրանց վերաբնակվելու իրենց հայրենիքում, համայնքներում և ընտանիքներում; վերազինել միգրանտներին դիմակայելու վերադարձի և վերաինտեգրման գործընթացի նարտահրավերներին:</p> <p>Ծրագրերը՝</p> <p>Աջակցվող կամավոր վերադարձ Լեհաստանից և վերաինտեգրում (2010-2013թթ., ֆինանսավորվում է Վերադարձի եվրոպական հիմնադրամի և Լեհաստանի կառավարության կողմից) «Բի-քոնեքթիվ» (Բելգիա, 2014-2015թթ., ֆինանսավորվում է Վերադարձի եվրոպական հիմնադրամի կողմից) ԵՄ-ում բնակվող՝ քրոնիկ հիվանդություն ունեցող միգրանտների՝ աջակցվող կամավոր վերադարձի և վերաինտեգրման</p>		

